Հաստատված է
«Մասնագիտական կրթության որակի ապահովման
ազգային կենտրոն» հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 2020թ. հունիսի 29-ի N 5-Լ որոշմամբ
Ս. Կարաբեկյան

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Տարեկան հաշվետվություն-2019

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ

Ձանապարհ դեպի Որակ

Երևան-2020

Բովանդակություն

ՈԱԱԿ-Ը 2019 ԹՎԱԿԱՆԻՆ. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ 4

I. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ 6

1. Բարձրագույն կրթական համակարգ 7

Ինստիտուցիոնալ հավատարմագրում 7

Հավատարմագրման շնորհման վերաբերյալ որոշումների կայացում 10

Գրառումներ հավատարմագրման պետական գրանցամատյանում 10

Բուհերի փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրեր 11

2. Ծրագրային հավատարմագրման գործընթացներ 11

3. Միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգ 12

4. Մշտադիտարկումներ 14

5. Էլեկտրոնային ինստիտուցիոնալ տվյալների շտեմարան 15

I. ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 16

1. Խորհրդատվությունների տրամադրում ՄՈՒՀ-երին 17

2. Վերապատրաստումներ ՄՈՒՀ-երի համար 18

3. Փորձագետների վերապատրաստումներ 19

4. Կլոր սեղան-քննարկումներ/թեմատիկ հանդիպումներ 20

5. Որակի ներքին ապահովման պատասխանատուների հանդիպումներ 21

6. Որակի ապահովման աջակիցների ցանց 22

7. «Ուսանողության ձայն» նախագիծ 23

8. ՈԱԱԿ-ի հաշվետվողականության ու թափանցիկության ապահովում 24

Հասարակության հետ կապեր 24

ՈԱԱԿ-ի 10-ամյակի միջոցառումներ 25

ԶԼՄ-ների հետ աշխատանք և ազդեցության գնահատում 27

II. ՈԱԱԿ-Ի ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ 29

1. Արտաքին և ներքին գործընթացների արդյունավետության գնահատում 30

Հավատարմագրման գործընթացների վերլուծություն 31
Մարդկային ռեսուրսների կառավարում 32
ՈԱԱԿ ֆինանսական քաղաքականությունը և անկախություն 35
2. ՈԱԱԿ-ի գործունեության արտաքին գանահատման գործընթացներ 37
3. Բարելավմանը միտված գործողությունների պլանավորում և իրականացում 38
III. ՈԱԱԿ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ 39
1. Միջազգային ճանաչում ապահովող կառույցներին անդամակցություն 40
Բոլոնյան գործընթացի որակի ապահովման գործընկերային աջակցության խումբ 41
2. Միջազգային ծրագրեր 42
ԵՄ «Էրազմուս+»-ի C3QA ծրագիր 42
ԵՄ ֆինանսավորմամբ «EuniQ» ծրագիր 43
Անձնակազմի փոխանակման ծրագրեր 44
3. Տարածաշրջանային համագործակցություն 45
IV. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ 46

ՈԱԱԿ-Ը 2019 ԹՎԱԿԱՆԻՆ. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Բուհերի ռազմավարական կառավարման արդյունավետության որակի ապահովում

- ՈԱԱԿ-ն ինստիտուցիոնալ հավատարմագրումներով խթանել է բուհերի ռազմավարության համահունչեցումը երկրի ռազմավարական նպատակներին՝ կարևորելով բուհերի հաշվետվողականությունն արդյունավետության ցուցանիշների ներդրմամբ:

Միջազգային ոլորտային չափանիշների ինտեգրում ՀՀ մասնագիտական կրթության որակի ապահովման համակարգում

- Բժշկական, ռազմական, արվեստի ու մշակույթի ոլորտների կրթության միջազգային չափանիշները ներառվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացում:

Կրթական ծրագրերի արդյունավետության և որակավորումների շնորհման որակի ապահովում

- Կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավման նպատակով ՈԱԱԿ-ն աջակցել է բուհերում կարողությունների զարգացմանը վերապատրաստումներով և աշխատաժողովներով:
- Ինստիտուցիոնալ հավատարմագրման ընթացքում ՄՈՒՀ-երում իրականացվել են ամփոփիչ ատեստավորման մշտադիտարկումներ:

Շարունակական աջակցություն բուհերում որակի մշակույթի զարգացմանը

- Ինստիտուցիոնալ հավատարմագրմամբ ՈԱԱԿ-ը խթանում է ՄՈՒՀ-երի ինքնագնահատման և վերլուծական կարողությունների զարգացումը:
- ՈԱԱԿ-ի աջակցությամբ և մասնակցությամբ ՀՀ և ԱՀ պետական և ոչ պետական բուհերում փորձնական ներքին գնահատումներ են տեղի ունեցել որակի ապահովման ներքին համակարգի զարգացման և որակի բարելավման մշակույթի ներդրման նպատակով:

Որակի շարունակական բարելավման խթանում

- ՈԱԱԿ-ը շարունակել է պետական և ոչ պետական բուհերում որակի ապահովման համակարգի մշտադիտարկումները՝ որակի անընդհատ բարելավման մշակույթի ձևավորման նպատակով:

Փորձագիտական կարողությունների զարգացում

- ՄԿԾ որակի ապահովման կարողությունների զարգացման նպատակով ներդրվել է աշխատանքային փորձի վրա հիմնված վերապատրաստման մոդել:
- Փորձագետների բազան համալրվել է բուհում բարելավման սեփական փորձ ունեցած դասախոսներով և ամբիոնի վարիչներով:

ՄՈՒՀ-երում որակի բարելավման կարողությունների զարգացման գործում ուսանողների մասնակցության խթանում

- Ուսանող-փորձագետների պատրաստման ՈԱԱԿ-ի մեխանիզմները Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիան (ENQA) դիտարկել է որպես լավագույն փորձ:
- ՈԱԱԿ-ի կազմակերպած բազմաթիվ գործընկերային աշխատաժողովների արդյունքում բացահայտվել է, որ ուսանողները դասախոսների հետ կարող են պրոակտիվ մասնակցել հատկապես առցանց ուսուցման միջավայրում պրակտիկ բովանդակությամբ ուսումնական նյութերի պատրաստմանը:

Երրորդ մակարդակի որակի ապահովում

- Կրթության երրորդ մակարդակի որակի ապահովման համար ՈԱԱԿ-ը մշակել է քաղաքականություն հետխորհրդային համակարգերի համար: Առաջարկվել է այն ներդնել ՀՀ-ում, Ղազախստանում և Մոնղոլիայում:

Միջին մասնագիտական կրթության ոլորտում ռազմավարական կառավարման խթանում

- ՈԱԱԿ-ը ՄԿՈՒ համակարգում ինստիտուցիոնալ հավատարմագրման հիմքում առաջարկել է ներդնել տեղական գործատուների հետ ընդհանուր ռազմավարության վրա հիմնված համագործակցության ցուցիչ:

ՈԱԱԿ-ը որպես եվրոպական կրթական համակարգին ինտեգրված որակի ապահովման կառույց

- ՈԱԱԿ-ը մասնակցում է եվրոպական բարձրագույն կրթության տարածքում որակի ապահովման համատեղ գործընթացներին որպես հավասար փորձառություն ունեցող եվրոպական որակի ապահովման կառույց:
- ՈԱԱԿ-ն ընդգրկվել է Եվրոպական բարձրագույն կրթության որակի ապահովման ասոցիացիայի (ENQA) Կառավարման խորհրդում որպես հետխորհրդային երկրների ներկայացուցիչ:
- ՈԱԱԿ-ը խթանում է ճանաչելի որակավորումներով ռեգիոնալ աշխատաշուկայի ձևավորման որակի պահովման մեխանիզմները:

Շահակիցների հետ անընդհատ հաղորդակցության ապահովում

- ՈԱԱԿ-ը շարունակում է ոլորտի շահակիցների տարբեր խմբերի հետ ինտենսիվ հաղորդակցությունը մի շարք թեմաներով.
    - Կրթական հաստատության արդյունքահեն կառավարում,
    - Կրթական ծրագրերի պատասխանատու իրականացում,
    - Ուսանողների գնահատում և ուսումնառություն,
    - Շահակիցների ներգրավում,
    - Որակի մշակույթի ձևավորում:

I. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Փաստեր

- 2019 թվականին ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթաց է իրականացվել 12 բուհում, որից 8-ը՝ երկրորդ շրջափուլով:
- Կայացվել է ինստիտուցիոնալ հավատարմագրման մասին 3 որոշում:
- Իրականացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրումներ բժշկական, ոստիկանական, արվեստի ու մշակույթի, գյուղատնտեսական ուղղվածությամբ բուհերում:
- Հավատարմագրման գործընթացներում ներգրավվել են ավելի քան 20 միջազգային փորձագետներ վերոնշյալ ոլորտներից:
- Հավատարմագրման գործընթացներում ներգրավվել են ավելի քան 50 փորձագետներ ՀՀ բուհերից:
- Իրականացվել են մշտադիտարկումներ 20 պետական և ոչ պետական բուհերում:
- Իրականացվել է ինստիտուցիոնալ հավատարմագրում 5 միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:
- ՈԱԱԿ-ի փորձագետների բազայում գրանցված են շուրջ 700 տեղացի և միջազգային փորձագետներ: Նրանց մեծ մասն արդեն մասնակցել է ՈԱԱԿ-ի կազմակերպած փորձագետների վերապատրաստման դասընթացներին:
- ՈԱԱԿ-ի ինստիտուցիոնալ էլեկտրոնային բազայում տվյալներ են լրացրել 25 պետական և ոչ պետական բուհեր:
- Փորձնական արտաքին գնահատումներ են իրականացվել Արցախի Հանրապետության 1 պետական և 2 ոչ պետական ուսումնական հաստատություններում:
- 2018 թվականից սկսած Արտաքին գնահատման զեկույցների ռեգիստրում (DEQAR) հրապարակված են ՈԱԱԿ-ի փորձագիտական զեկույցների անգլերեն տարբերակները: Հրապարակված է 14 փորձագիտական զեկույց:

Ազդեցություն

- Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացների արդյունքում բարելավվել է բուհերի ռազմավարական պլանավորումն ու կառավարումը:
- Բուհերում մասնագիտության կրթական ծրագրերի վերանայումը դարձել է առօրյա խնդիր:
- Առավել մեծ ուշադրության են արժանանում ուսանողների գնահատման արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումները:
- Ներդրվում են տվյալների հավաքագրման մեխանիզմներ:
- Բուհերը նախաձեռնում են դասախոսների մասնագիտական առաջընթացը խթանող միջոցառումներ:
- Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ներդրվում են որակի ապահովման մեխանիզմներ, մեկնարկել են բարեփոխումների գործընթացներ կառավարման, կրթական ծրագրերի, արտաքին կապերի ամրապնդման ոլորտներում:
- Արցախի Հանրապետության բուհերում ներդրվել է որակի ներքին ապահովման համակարգ:
- ԱՀ բուհերը մեկնարկել են առցանց ուսուցման գործընթաց աշխատող ուսանողների համար, ստեղծել են առցանց ուսուցման միջավայր:

1. Բարձրագույն կրթական համակարգ

Ինստիտուցիոնալ հավատարմագրում

2019թ. ավարտվեց ինստիտուցիոնալ հավատարմագրման առաջին փուլը բոլոր պետական բուհերում և այն ոչ պետական բուհերում, որոնք ունեն մեծաթիվ ուսանողներ: Ամփոփելով առաջին շրջափուլի արդյունքները՝ ՈԱԱԿ-ն ինստիտուցիոնալ հավատարմագրման երկրորդ շրջափուլում խթանում է բոլոր մասնագիտությունների կրթական ծրագրերի շարունակական բարելավման մեխանիզմների ներդնումն ու զարգացումը: Ներդրված էլեկտրոնային ինստիտուցիոնալ տվյալների շտեմարանը հնարավորություն է տալիս նախապես հավաքագրել տեղեկատվություն բոլոր կրթական ծրագրերի վերաբերյալ և վերլուծել այն նախքան փորձագիտական այցը:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման երկրորդ շրջափուլում դիտարկվել է ուսումնական գործընթացը՝ դասալսումների, տարբեր ուսումնական բազաներում գործնական պարապմունքներ ուսումնասիրելու, ավարտական ատեստավորման քննություններին, թեզերի պաշտպանություններին մասնակցելու միջոցով:

Որդեգրած մոտեցումը հնարավորություն է տալիս ինստիտուցիոնալ հավատարմագրման ժամանակ ուշադրության կենտրոնում պահել մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման արդյունավետությունը, դիտարկել առավել շատ կրթական ծրագրեր և դրանց որակի ապահովման մեխանիզմները:

Արդյունքում պարզ դարձավ, որ բուհերը ներդնում են կրթական ծրագրերի շարունակական բարելավման մեխանիզմներ՝ բարձրացնելով ուսանողների գնահատման համակարգի արդյունավետությունը: Աշխատանքներ են տարվում նաև արտադրական պրակտիկաների արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման երկրորդ շրջափուլում հաշվի են առնվել միջազգային ոլորտային չափանիշները բժշկական, ռազմական, արվեստի ու մշակույթի ոլորտների համար:

Միջազգային փորձագետներն ընտրվել են այն կազմակերպություններից, որոնք միջազգային ոլորտային չափանիշների կիրառման փորձ ունեն, իսկ տեղացի փորձագետներն անցել են վերապատրաստումներ և մասնակցել քննարկումների միջազգային ոլորտային չափանիշների վերաբերյալ:

Հաշվետու տարում իրականացվել է ինստիտուցիոնալ հավատարմագրման երկրորդ փուլի 8 գործընթաց հետևյալ բարձրագույն ուսումնական հաստատություններում.

- Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում,
- Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանում,

- Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանում,
- ՀՀ Պետական կառավարման ակադեմիայում,
- Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանում,
- Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում,
- ԱԻՆ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում,
- Հայաստանի ազգային ագրարային համալսարանում:

Առաջին անգամ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթաց է իրականացվել հետևյալ 4 բարձրագույն ուսումնական հաստատություններում.

- ՀՀ Ոստիկանության կրթահամալիրում,
- Ավանդական բժշկության համալսարանում,
- Շուշիի տեխնոլոգիական համալսարանում,
- Հայկական բժշկական ինստիտուտում:

ՈԱԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի հաստատած «Փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան փորձագիտական խմբերը ձևավորվել և համաձայնեցվել են ուսումնական հաստատությունների հետ: Յուրաքանչյուր փորձագիտական խմբում ընդգրկվել է 3 տեղացի, 1 /որոշ դեպքերում՝2/ միջազգային փորձագետ և 1 ուսանող ՈԱԱԿ-ի՝ տեղացի, միջազգային և ուսանող-փորձագետների բազաներից:

Հաշվետու տարում փորձագետներ են ներգրավվել հետևյալ կազմակերպություններից.

- Հայդելբերգի համալսարանի Հանրային առողջության ինստիտուտ,
- Էստոնիայի երաժշտության և թատրոնի ակադեմիա,
- Մաստրիխտի երաժշտական ակադեմիա,
- Լեհաստանի ռազմածովային ակադեմիա,
- Որակի ապահովման նիդեռլանդական VLHORA և VLHUR կազմակերպություններ,
- Բարձրագույն կրթության հավատարմագրման եվրոպական կոնսորցիում (ECA),
- Բարձրագույն ուսումնական հաստատությունների եվրոպական ասոցիացիա (EURASHE),
- Գերմանական FH Aachen կիրառական գիտությունների համալսարան,
- Հնդկաստանի Քաղցկեղի բուժման Մաքս ինստիտուտ,
- Բժշկական կրթության համաշխարհային ֆեդերացիա (WFME),
- Նիդեռլանդների և Ֆլանդրիայի հավատարմագրման կազմակերպություն (NVAO),

- Լեհաստանի Նիկոլայ Կոպեռնիկոս համալսարան:

Տեղացի և ուսանող փորձագետներ ներգրավվել են մի շարք հայաստանյան բուհերից և կազմակերպություններից, մասնավորապես՝

- Երևանի պետական համալսարան,
- Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան,
- Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան,
- Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան,
- Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան,
- Հայ-ռուսական համալսարան,
- Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա,
- Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան,
- Շիրակի պետական համալսարան,
- Եվրասիա միջազգային համալսարան,
- Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան:

Ըստ Հավատարմագրման կարգով սահմանված ընթացակարգի և հաստատված ժամանակացույցի՝

1. իրականացվել են ինքնավերլուծությունների ու կից փաստաթղթերի նախնական ուսումնասիրություն, դասալսումներ, ուսումնական գործընթացի դիտարկումներ և փորձագիտական այցեր ուսումնական հաստատություններ;
2. սահմանված ժամկետներում կազմվել են փորձագիտական խմբերի նախնական զեկույցները և տրամադրվել բուհերին: Բուհերի առարկությունները հաշվի առնելով՝ լրամշակվել են վերջնական զեկույցները;
3. փորձագիտական զեկույցներում տրված խորհրդատվությունների հիման վրա ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած բուհերը մշակել են թերությունների վերացման ծրագիր, որտեղ, մասնավորապես, շեշտադրվել է առաջիկայում բուհերի կողմից բոլոր կրթական ծրագրերի ներքին աուդիտի իրականացումը: Թերությունների վերացման ծրագրերը գնահատվել են նույն փորձագիտական խմբերի կողմից և կցվել Հավատարմագրման հանձնաժողովին տրամադրվող փաստաթղթերի փաթեթին՝ որոշման կայացման համար:

2019 թվականին ինստիտուցիոնալ հավատարմագրման համար դիմում-հայտ է ներկայացրել 9 բուհ և 1 քոլեջ, որոնցից 6 անցնելու են ինստիտուցիոնալ հավատարմագրման

երկրորդ շրջափուլով, իսկ Արցախի Հանրապետության 3 բուհում ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացն իրականացվելու է առաջին անգամ: Այդ հաստատությունների հավատարմագրման գործընթացները պլանավորված են մոտակա մեկ տարվա համար:

Որակի մշակույթի տարածմանը նպաստելու, տարածաշրջանի հետ համագործակցությունն ամրապնդելու նպատակով ՈԱԱԿ-ը հաշվետու տարում Արցախի Հանրապետությունում գործող պետական և ոչ պետական բուհերում կազմակերպել և իրականացրել է փորձնական արտաքին գնահատումներ:

Արդյունքում, Արցախում գործող պետական և ոչ պետական բուհերը նախաձեռնել են ինչպես կառավարման համակարգի, այնպես էլ մասնագիտությունների կրթական ծրագրերի բարեփոխումներ՝ հաշվի առնելով Արցախի Հանրապետության յուրահատուկ միջավայրը: Ներդրվել են առցանց ուսուցման իրականացման և գնահատման մեխանիզմներ և միջավայր՝ աշխատող ուսանողների առաջընթացի ապահովման համար:

Հավատարմագրման շնորհման վերաբերյալ որոշումների կայացում

2019 թվականին Հավատարմագրման հանձնաժողովը կայացրել է որոշումներ 1 ոստիկանական և 2 քաղաքացիական բուհի վերաբերյալ, որոնց շնորհվել է հավատարմագրում 4 տարի ժամկետով:

Որոշումները կայացվել են հետևյալ ուսումնական հաստատությունների վերաբերյալ՝

	Հաստատության անվանումը	**Շնորհված հավատարմագրումը**
1	Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան	ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով
2	Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան	ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով
3	ՀՀ Ոստիկանության կրթահամալիր	ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով

Աղյուսակ 1

Գրառումներ հավատարմագրման պետական գրանցամատյանում

ՈԱԱԿ-ը վերոնշյալ բարձրագույն ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրումների մասին գրառումներ է կատարել հավատարմագրման պետական գրանցամատյանում (տես հղման ներքո http://bit.ly/2MxUIu5):

Բուհերի փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրեր

2019թ. հավատարմագրում ստացած բոլոր ուսումնական հաստատությունները, հետևելով Հավատարմագրման կարգի պահանջներին, ՈԱԱԿ են ներկայացրել փորձագիտական զեկույցներում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագրերը և ժամանակացույցերը: ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողովի առաջարկությունների հիման վրա, հավատարմագրման որոշումից հետո, բուհերը վերանայել են իրենց ներկայացրած պլանները՝ ներառելով բոլոր կրթական ծրագրերի բարելավումների և ծրագրերի ներքին աուդիտի իրականացման վերաբերյալ կետեր:

Հավատարմագրման կարգի համաձայն 4 կամ 6 տարի հավատարմագրում ստացած ուսումնական հաստատությունները 2 տարին մեկ անգամ, իսկ պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում ստացած ՄՈՒՀ-երը յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ պարտավոր են իրականացնել ինստիտուցիոնալ ներքին գնահատում և արդյունքները ներկայացնել ՈԱԱԿ:

Նախատեսված ժամկետներում 2019թ. հաշվետվություններ են ներկայացրել Գավառի պետական համալսարանը, ԳԱԱ գիտակրթական կենտրոնը, Շիրակի պետական համալսարանը, Եվրոպական համալսարանը, Գորիսի պետական համալսարանը: Ներկայացված հաշվետվություններն ուսումնասիրվել են ՈԱԱԿ-ի համակարգողների կողմից:

2. Ծրագրային հավատարմագրման գործընթացներ

Մասնագիտությունների կրթական ծրագրերի շարունակական բարելավումը խրախուսելու համար ինստիտուցիոնալ հավատարմագրման երկրորդ շրջափուլի ընթացքում փորձագետներն ուսումնասիրել են հավատարմագրման ենթակա բուհերում գործող մասնագիտությունների կրթական ծրագրերի մեծ մասը, դիտարկվել է ուսումնական գործընթացի արդյունավետությունը: Փորձագիտական այցերի ժամանակ փորձագետները մասնագիտական խոսակցություն են ունեցել բուհի կողմից ներկայացված երեք կրթական ծրագրերի պատասխանատուների, դասախոսական կազմի ներկայացուցիչների և ուսանողների հետ՝ նպատակ ունենալով պարզել իրականացվող կրթական ծրագրերի արդյունավետությունը և որակի ապահովման մեխանիզմները:

Բուհերն ինստիտուցիոնալ էլեկտրոնային տվյալների շտեմարանում լրացրել են տվյալներ ուսանողների և շրջանավատների թվաքանակի, զբաղվածության և առաջընթացի վերաբերյալ բոլոր մասնագիտությունների կրթական ծրագրերի կտրվածքով, որը հնարավորություն է տալիս պարբերաբար մշտադիտարկել բուհերի առաջընթացը:

2019թ. իրականացված 12 ինստիտուցիոնալ հավատարմագրումների շրջանակներում մանրամասն ուսումնասիրվել է շուրջ 150 կրթական ծրագիր:

Ծրագրային հավատարմագրումը որպես մարտահրավեր դիտարկելով՝ ՈԱԱԿ-ը 2019 թվականին շարունակել է քննարկումները ԿԳՄՍ նախարարության հետ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծում ծրագրային հավատարմագրման դրույթների ներառման ուղղությամբ: Արդյունքում՝ օրենքի նախագծում ներառվել է կրթական ծրագրերի կամ դրանց խմբերի հավատարմագրման իրականացումը որպես պարտադիր պայման, պարտադիր է նաև առաջին շրջափուլի ավարտից հետո մեկ տարվա ընթացքում նոր ներդրված կրթական ծրագրերի հավատարմագրման իրականացումը:

Տվյալ դրույթների իրականացումը կբերի կրթական ծրագրերի լայնածավալ բարեփոխումների և ուսուցման որակի բարելավմանը:

3. Միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգ

ՈԱԱԿ-ը ջանքեր է գործադրում բարձրացնելու միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում և համապատասխանեցնելու Եվրոպական մոտեցումներին՝ նպատակ ունենալով խրախուսել կրթության որակի շարունակական բարելավման նախադրյալների ստեղծումը ՄԿՈՒ հաստատություններում:

Այդ նպատակով իրականացվում են փոխգնահատումներ, փորձագետների և ՄԿՈՒ հաստատությունների աշխատակիցների վերապատրաստումներ, ոլորտի շահակիցների մասնակցությամբ համաժողովներ և կլոր սեղան-քննարկումներ, որոնք խթանում են մեծածավալ բարեփոխումների իրականացումը:

Ներկայում ՄԿՈՒ ոլորտում մեկնարկել են բարեփոխումները կառավարման համակարգում, կանոնակարգվում են տարբեր գործընթացներ և ներդրվում է որակի ապահովման ներքին համակարգը: Դեռևս մարտահրավեր է մնում ՄԿՈՒ հաստատությունների ինքնավարության բարձրացումը, որակի ապահովման համակարգում ՊԻԳԲ շրջափուլի լիարժեք կիրառումը, գործատուների կողմից ՄԿՈՒ հաստատությունների որակավորումների ճանաչելիությունը, դասախոսական կազմի կատարելագործմանն ուղղված ծրագրերի բացակայությունը, երիտասարդ դասախոսների պակասը և այլն: Մարտահրավերներ են նաև ՄԿՈՒ հաստատությունների և գործատուների հետ արդյունավետ համագործակցությունը, աշխատաշուկայում տեղի ունեցող արագ փոփոխություններին ոչ համահունչ քայլելը, ուսանողների շրջանում գործնական հմտությունների պակասը, կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման համար ֆինանսական և նյութատեխնիկական ոչ բավարար ռեսուրսները:

Մարտահրավերներին արձագանքելու նպատակով 2019թ. ՈԱԱԿ-ն իր գործողությունների պլանի շրջանակներում հանդիպումներ է ունեցել ՄԿՈ ոլորտի

շահակիցների հետ՝ աշխատաժողովների, կլոր-սեղան քննարկումների, անհատական հանդիպումների միջոցով և տրամադրել է համապատասխան տեղեկատվություն, օժանդակություն և խորհրդատվություն ՄԿՈՒ ոլորտի ներկայացուցիչներին: Տեղի են ունեցել հանդիպումներ քոլեջների տնօրենների և որակի ապահովման պատասխանատուների հետ:

ՄԿՈՒ ոլորտում առկա խնդիրներին արձագանքելու համար ՈԱԱԿ-ն իրականացրել է «ՄԿՈՒ-գործատու երկխոսություն. համատեղ ռազմավարության բանաձև» թեմայով համաժողով, որը կոչված էր աջակցելու ուսումնական հաստատություններից յուրաքանչյուրին գտնել գործատուների հետ շարունակական համագործակցության իր բանաձևը:

2019թ. Ընթացքում, «Որակավորումների բարելավում ավելի լավ աշխատատեղերի համար» ԵՄ բյուջետային աջակցության ֆինանսական համաձայնագրի թիվ 5 նախապայմանի շրջանակներում, Հայաստանում Եվրամիության պատվիրակության հայտարարած մրցույթի արդյունքում ընտրված փորձագետի կողմից, ՈԱԱԿ-ի աջակցությամբ, գյուղատնտեսական քոլեջների անձնակազմերի, ինչպես նաև փորձագետների համար իրականացվել են որակի ներքին ապահովման գործընթացների վերաբերյալ վերապատրաստումներ և աշխատաժողովներ:

Հաշվետու տարում ՈԱԱԿ-ն ակտիվորեն մասնակցել է «Թուրինի գործընթաց 2018-2020 Հայաստան» միջոցառումների շարքին և աշխատանքային խմբերի քննարկումներին:

2019թ. մեկնարկել է քոլեջների հավատարմագրման գործընթացը: Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջը դիմել է հավատարմագրման և հաշվետու տարում փորձագիտական խմբի կողմից, ՈԱԱԿ համակարգողի ուղղորդմամբ, իրականացվել է քոլեջի գործունեության նախնական գնահատում և փորձագիտական այց:

2019թ. մի շարք այլ քոլեջներ նույնպես դիմել են հավատարմագրման, սակայն դրանցից որոշների գործընթացները հետաձգվել են, քանի որ վերջիններիս ներկայացրած ինքնավերլուծությունները չեն ընդունվել ՈԱԱԿ-ի կողմից՝ Հավատարմագրման կարգով սահմանված պահանջներին չհամապատասխանելու պատճառով:

«Որակավորումների բարելավում ավելի լավ աշխատատեղերի համար» համաձայնագրի թիվ 5 նախապայմանի շրջանակներում՝ ՈԱԱԿ-ի համակարգողների ուղղորդմամբ փորձագիտական խմբերի կողմից հաշվետու տարում իրականացվել է Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական, Գորիսի պրոֆեսոր Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական, Ստեփանավանի պրոֆեսոր Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական և Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջների գործունեության նախնական գնահատում՝

քոլեջների կողմից ներկայացված ինքնավերլուծությունների և ուղեկցող փաստաթղթային փաթեթների հիման վրա: ՈԱԱԿ-ի համակարգողները հավատարմագրման ենթակա քոլեջների հետ իրականացրել են փորձագիտական այցերի նախապատրաստական աշխատանքներ: 2019թ. դեկտեմբերին ՈԱԱԿ-ը ԿԳՄՍ նախարարության հետ կնքել է պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին N 9.6.1.23/1 պայմանագիրը, որը 2020թ. սկզբին հնարավորություն կտա ավարտին հասցնել հավատարմագրման գործընթացները վերոնշյալ քոլեջներում:

Հաշվետու տարում ՈԱԱԿ-ը ՄԿՈՒ ոլորտում իրականացրած միջոցառումների արդյունքների մասին պարբերաբար հաշվետվություններ և տեղեկություններ է տրամադրել լիազոր գերատեսչություններին:

4. Մշտադիտարկումներ

Խթանելով ՄՈՒՀ-երում կրթության որակի շարունակական բարելավման մշակույթի ներդրումը՝ ՈԱԱԿ-ը պարբերաբար իրականացնում է մշտադիտարկումներ հավատարմագրված և դեռևս հավատարմագրման գործընթաց չանցած ՄՈՒՀ-երում՝ դիտարկելով թերությունների վերացման ծրագրի առաջընթացը և որակի ներքին ապահովման համակարգի առկա վիճակը:

Մշտադիտարկումների նպատակն է եղել հավաստիանալ, որ հավատարմագրում ստացած ՄՈՒՀ-երը կատարում են ստանձնած պարտավորությունները կրթության որակի շարունակական բարելավման առումով, իսկ չհավատարմագրվածները համապատասխան քայլեր են ձեռնարկում որակի ներքին ապահովման համակարգի ներդրման կամ զարգացման ուղղությամբ: Մշտադիտարկման նպատակով այցեր են իրականացվել 10 հավատարմագրված բուհեր, ուսումնասիրվել են թերությունների վերացման պլանով սահմանված արդյունքների ձեռքբերումը, առաջընթացը յուրաքանչյուր տիրույթի սահմաններում, հետաձգումների պատճառները: Մշտադիտարկումների ընթացքում իրականացվել են հանդիպումներ շահակիցների հետ, կատարվել է փաստաթղթերի ուսումնասիրություն:

Չհավատարմագրված 10 բուհերում դիտարկվել է որակի ներքին ապահովման համակարգի ներդրվածության աստիճանը, գործող մեխանիզմները և նախապատրաստվածության աստիճանը ինստիտուցիոնալ հավատարմագրմանը: Այցերի արդյունքները ամփոփվել են այցի ավարտին բուհերի ղեկավար կազմի հետ ունեցած հանդիպումներում:

Մշտադիտարկումների արդյունքում պարզ դարձավ, որ հավատարմագրված բուհերը

հիմնականում առաջնորդվում են թերությունների վերացման ծրագրով՝ այն ընդունելով որպես հետագա զարգացման գործիք: Բուհերը քայլեր են ձեռնարկում մասնագիտությունների կրթական ծրագրերի բարելավման, որակի ապահովման տարբեր գործընթացների արդյունավետության գնահատման մեխանիզմների ներդրման, ինչպես նաև ռազմավարական կառավարման բարելավման ուղղությամբ:

Դեռևս մարտահրավեր է մնում մասնագիտությունների կրթական ծրագրերի որակի ապահովման կայուն մեխանիզմների ներդրումն ու գործարկումը, ինչպես նաև իրականացվող գործընթացների պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում /ՊԻԳԲ/ շրջափուլի ոչ ամբողջական գործարկումը:

5. Էլեկտրոնային ինստիտուցիոնալ տվյալների շտեմարան

ՈԱԱԿ-ը ներդրել է էլեկտրոնային ինստիտուցիոնալ տվյալների հավաքագրման շտեմարան, որտեղ բոլոր ՄՈՒՀ-երը լրացնում են ուսանողների և շրջանավարտների, դասախոսական կազմի, մասնագիտական կրթական ծրագրերի, ուսումնական ռեսուրսների, որակի ապահովման համակարգի արդյունավետության վերաբերյալ տվյալներ և ցուցանիշներ:

Ներկայում էլեկտրոնային շտեմարանում իր տվյալներն է լրացրել մոտ 25 ուսումնական հաստատություն:

I. ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փաստեր

- 2019թ. ՈԱԱԿ-ը խորհրդատվություն է մատուցել 200 շահակցի:
- Վերապատրաստվել է բուհերի և քոլեջների 76 աշխատակից (2016-2019 թթ.՝ 410 մասնագետ):
- Փորձագիտական աշխատանքի համար վերապատրաստվել է 60 մասնագետ:
- Շուրջ 50 ուսանողներ մասնակցել են ուսանող-փորձագետների պատրաստման դասընթացներին:
- Կրթության ոլորտին վերաբերող ակտուալ խնդիրների շուրջ ՈԱԱԿ-ում կազմակերպված կլոր -սեղաններին մասնակցել է տարբեր ուսումնական հաստատություններից ավելի քան 300 աշխատակից:
- Բուհերի և քոլեջների մոտ 400 ներկայացուցիչներ են մասնակցել ՈԱԱԿ-ի 10- ամյակի միջոցառումներին:
- Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի ընդհանուր վեհաժողովին մոտ 150 որակի ապահովման գործակալությունների ներկայացուցիչներ են մասնակցել աշխարհի տարբեր երկրներից:
- Տարվա ընթացքում ՈԱԱԿ պաշտոնական կայքն ունեցել է 15 747 այցելու և 63 319 էջադիտում:

Ազդեցություն

- ՄՈՒՀ-երում ձևավորվում է ռազմավարական կառավարման մշակույթ:
- Ներդրվում են ՄԿԾ որակի ապահովման մեխանիզմներ:
- ՄՈՒՀ-երն սկսել են ՄԿԾ-ների բենչմարքինգ իրականացնել, ինչը նպաստավոր հիմք է ստեղծում միջազգայնացման համար:
- Որոշումները ՄՈՒՀ-երում աստիճանաբար կայացվում են հավաքագրած տվյալների վերլուծության հիման վրա:
- Որակի ապահովման մեխանիզմներն ու գործիքները ծառայեցվում են կրթության առաջանցիկության ապահովմանը և աշխատաշուկայի կարիքների բավարարմանը:
- Շահակիցները սկսել են ոլորտին բնորոշ տերմինաբանությամբ միմյանց հետ շփվել, այդ թվում և ներբուհական միջավայրում:
- Ռեկտորի թեկնածուները բուհի զարգացման իրենց ծրագրում անդրադարձ են կատարում հավատարմագրմանը:
- Ձևավորվում է փորձագիտական ներուժ բուհերում բարեփոխումների իրականացման համար:
- Վերապատրաստված ուսանողներն իրենց մասնակցությունն են ունենում բուհերում որակի ներքին ապահովման գործընթացներին, ինչպես նաև ներգրավվում են կառավարման մարմիններում:

1. Խորհրդատվությունների տրամադրում ՄՈՒՀ-երին

Խորհրդատվությունների տրամադրումն իրականացվում է 2 ուղղությամբ.

- ՈԱԱԿ-ը թեմատիկ վերլուծությունների միջոցով դուրս է բերում մասնագիտական կրթության ոլորտի մարտահրավերները, ՄՈՒՀ-երի թույլ կողմերը և իր նախաձեռնությամբ որակի ապահովման մեթոդաբանության վերաբերյալ պարբերաբար խորհրդատվություն է տրամադրում:
- ՄՈՒՀ-երի նախաձեռնությամբ տարբեր խորհրդատվական աշխատանքների իրականացում /Երևանի պետական բժշկական համալսարան, Արցախի Հանրապետության բուհեր և այլն/:

ՈԱԱԿ-ը հաշվետու տարում արել է 3 թեմատիկ հետազոտություն.

- ՈԱԱԿ-ի տասնամյակի շրջանակում կազմակերպված միջոցառումների արդյունքում վերհանած խնդիրների հիման վրա,
- ինստիտուցիոնալ հավատարմանգրման առաջին շրջափուլի, հավատարմագրված և հավատարմագրման գործընթաց չանցած բուհերի մշտադիտարկումների, ինչպես նաև փորձագիտական զեկույցների հիման վրա,
- միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հավատարմագրման փորձի ամփոփման հիման վրա:

Հետազոտությունները ցույց տվեցին, որ ինստիտուցիոնալ հավատրամագրման գործընթացների արդյունքում բոլոր պետական և մի շարք ոչ պետական բուհերում ծավալվել են ՈԱ մշակույթի ներդրման և տարածման գործընթացներ, որոնք ընթանում են տարբեր ինտենսիվությամբ և արդյունավետությամբ:

ՊԻԳԲ շրջափուլը ոչ բոլոր բուհերի կառավարման համակարգում է ներդրվել: ՄՈՒՀ-երի մի մասում ռազմավարական պլանավորման և արդյունավետության գնահատման մեխանիզմներն ու գործիքակազմը դեռևս ձևական բնույթ են կրում և չեն բերում բարելավման: Դա հատկապես վերաբերում է հավատարմագրում չանցած ուսումնական հաստատություններին:

ՈԱԱԿ-ում պարբերաբար կազմակերպվող հանդիպումների, կլոր սեղանների ընթացքում քննարկվել են ՈԱ ոլորտի հիմնախնդիրները: Թեմատիկ հետոզոտությունների հիման վրա ՄՈՒՀ-երին խորհրդատվություն է ապահովվել հետևյալ թեմաներով.

- ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության իրականացման մեթոդաբանություն,
- ՄՈՒՀ-ի զարգացման ռազմավարություն,
- ՄԿԾ որակի ապահովման քաղաքականություն,
- ուսանողի գնահատման քաղաքականություն (սովորեցնող/ձևավորող

գնահատման շեշտադրումով):

Ծավալուն խորհրդատվական աշխատանք է իրականացվել հատկապես Արցախի Հանրապետության բուհերի համար՝ դրանցում որակի ներքին ապահովման համակարգի և ռազմավարական կառավարման ներդրման նպատակով:

ԵՄ բյուջետային աջակցության «Որակավորումների բարելավում ավելի լավ աշխատատեղերի համար» ծրագրի շրջանակում խորհրդատվություն է ապահովվել հավատարմագրման փուլում գտնվող գյուղատնտեսական 4 քոլեջների համար: 2019 թ. ընթացքում հավատարմագրման նախապատրաստական աշխատանքներ են տարվել և խորհրդատվություն է տրամադրվել նաև այլ քոլեջների:

2. Վերապատրաստումներ ՄՈՒՀ-երի համար

Հաշվետու տարում ՄՈՒՀ-երի ներկայացուցիչների համար կազմակերպվել է ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը և մասնագիտական կրթական ծրագրերի որակի ապահովմանն ուղղված վերապատրաստման 6 դասընթաց: Վերապատրաստվել է ընդհանուր առմամբ 76 հոգի՝ բուհերից 65, քոլեջներից՝ 11: Քոլեջներից վերապատրաստվածների փոքր թիվը բացատրվում է նրանով, որ նախորդ տարիներին ՈԱԱԿ-ում վերապատրաստումներ են անցել ավելի քան 80 քոլեջի աշխատակիցներ, սակայն ոլորտում ֆինասական անբավարար ռեսուրսների հետևանքով դրանցում հավատարմագրման գործընթացներ չեն ծավալվել, իսկ վերապատրաստումների կարիք ուսումնական հաստատություններում հիմնականում ձևավորվում է ինքնավերլուծության շրջանում կամ հավատարմագրումն անցնելուց հետո ՈԱ համակարգի զարգացման, գործընթացների բարելավման արդյունքում: Վերապատրաստվածների թվում 25 հոգի եղել են Արցախի բուհերից, որոնց աշխատակիցներից մի քանիսը տարբեր թեմաներով վերապատրաստումներին մասնակցել են 2-3 անգամ: Եթե բուհերի մասնագետների համար վերապատրաստումները եղել են նաև ՄԿԾ ՈԱ թեմայի վերաբերյալ /մասնակցել է 29 աշխատակից/, ապա քոլեջներին ավելի շատ հետաքրքրում են ինստիտուցիոնալ կարողությունների վերլուծության մեթոդաբանության հետ կապված թեմաները:

Հավատարմագրման առաջին ցիկլի և մշտադիտարկման արդյունքների հիման վրա որոշվեց նաև վերապատրաստումների ընթացքում թիրախավորել ՄԿԾ-ների որակի ապահովման կառավարումը: 2019թ. փոփոխվեց «ՄԿԾ որակի ապահովման մեխանիզմներ» դասընթացի բովանդակությունը. եթե նախկինում շեշտադրվում էր ՄԿԾ պլանավորման և իրականացման գործընթացն, ապա նոր ծրագրում կարևորվեց այն հարցը, թե ինչ որակի ապահովման ներքին մեխանիզմներ է մշակել և կիրառում ուսումնական հաստատությունը՝ համոզվելու, որ իր ՄԿԾ-ներն արդյունավետ են: Արդյունքում՝ ՄՈՒՀ-երի աշխատակիցների

36%-ը վերապատրաստվել են այդ թեմայով:

Վերապատրաստումներից հետո անցկացված արդյունավետության գնահատումը ցույց է տվել, որ վերապատրաստվողների ավելի քան 94%-ը բավարարված է անցկացված վերապատրաստումներից: Այսինքն՝ 2018թ. համեմատությամբ բավարարվածությունը աճել է 14%-ով: Գնահատման այդպիսի բարձր ցուցանիշն ապահովվել է վերապատրաստման ծրագրերի անընդհատ բարելավման շնորհիվ, որի հիմքում վերապատրաստումների մասնակիցների արձագանքի և ՈԱԱԿ-ի թիմի թեմատիկ հետազոտությունների արդյունքների հաշվառումն է:

3. Փորձագետների վերապատրաստումներ

Հավատարմագրման ընթացքում հիմնավորված, անկախ և անկողմնակալ փորձագիտական գնահատում ապահովելու համար ՈԱԱԿ-ը պարբերաբար փորձագետների վերապատրաստումներ է իրականացնում:

Հաշվետու տարում ընդհանուր առմամբ վերապատրաստումներին մասնակցել է ՄՈՒՀ-երի 60 աշխատակից՝ դասախոսներ, կառավարման մարմինների աշխատակիցներ: 2019 թ. սկսեց իրականացվել փորձագետների հավաքագրման նոր քաղաքականությունը, որի արդյունքում փորձագետների հավաքագրման աղբյուրների բազմազանություն ապահովվեց: Այսպես.

- ըստ որակավորման ընդգրկվում են ՈԱԱԿ փորձագիտական բազայում գրանցվածները,
- հրավիրվում են ՄՈՒՀ-երի ինքնավերլուծության խմբերում ներգրավված աշխատակիցները,
- հրավիրվում են հավատարմագրման գործընթացներում մասնակցած փորձագետների երաշխավորությամբ,
- հրավիրվում են ուսանող-փորձագետների երաշխավորմամբ,
- հրավիրվում են ՄՈՒՀ-երի ՈԱ ղեկավարի երաշխավորությամբ,
- ընտրվում են ՈԱԱԿ-ում կլոր սեղանների /թեմատիկ, ոլորտային/ անցկացման արդյունքում,
- ընտրվում են ՄՈՒՀ-երում ՊԴ կազմի և կառավարիչների հետ անցկացվող ֆոկուս-խմբերի արդյունքում,
- ներգրավվում են ՈԱԱԿ-ում այլ թեմաներով վերապատրաստմանը մասնակցած մասնագետները,
- հրավիրվում են իրենց իսկ դասավանդման փորձը հետազոտող և դրա վերաբերյալ հոդվածներ հրապարակած դասախոսները,
- հրավիրվում են գիտության ոլորտում հայտնի մասնագետները,

- ներգրավվում են ՄՈՒՀ-երի հետ ակտիվ համագործակցող գործատուները:

Նոր քաղաքականությունը նպաստեց նաև ՈԱԱԿ փորձագետների բազայի համալրմանը, թեպետ այս ոլորտում առկա մարտահրավերները դեռ հաղթահարված չեն և ակտիվ աշխատանքները շարունակվում են:

Փորձագետների վերապատրաստման ծրագրում նույնպես բովանդակային փոփոխություն է տեղի ունեցել. եթե առաջին փուլում վերապատրաստումն ընթանում էր ՄՈՒՀ-ի կառավարման որակի գնահատման թեմայով, երկրորդ փուլում՝ ՄԿԾ մշակման և իրականացման, ապա երրորդ փուլում թիրախավորվել է ՄԿԾ կառավարման և որակի ապահովման ներքին մեխանիզմների արդյունավետության գնահատման թեման: Փորձագետների ուշադրությունը հրավիրվում է ՄՈՒՀ-ի՝ ՄԿԾ-ների արդյունավետության գնահատման հուսալի մեխանիզմների բացահայտմանը, որոնք շահակիցների համար հասանելի են և արժանահավատ են դարձնում որակավորումների շնորհումը:

Վերապատրաստումներից հետո անցկացված արդյունավետության գնահատումը ցույց է տվել, որ մասնակիցների ավելի քան 87%-ը բավարարված է անցկացվող վերապատրաստումներից: Ընդ որում, փոփոխություն է եղել նաև գնահատման կառուցվածքում՝ եթե նախորդ տարիներին ավելի բարձր էին գնահատվում հաղորդված տեսական գիտելիքները, ապա այժմ վերապատրաստման մասնակիցների կողմից արժևորվում է կոնկրետ դեպքի ուսումնասիրությունն ու դերային խաղերի կիրառումը, որը հնարավորություն է տալիս առավել հստակ պատկերացում կազմել փորձագետի աշխատանքի վերաբերյալ:

4. Կլոր սեղան-քննարկումներ/թեմատիկ հանդիպումներ

ՈԱԱԿ-ում կրթության ոլորտի որակի ապահովման հիմնախնդիրների քննարկման, տվյալ ժամանակահատվածի որակի ապահովման զարգացման միտումների տարածման, մասնագիտությունների կրթական ծրագրերի հնարավոր ռիսկերի գնահատման, շահակիցների հիմնախնդիրների քննարկման և ուղղորդման նպատակով անցկացվում են կլոր սեղան-քննարկումներ, աշխատաժողովներ և այլն: Կլոր սեղանների, աշխատաժողովների ընթացքում դուրս բերված բանաձևերը ուղեցույց են դառնում բուհերում որակի ապահովման կառույցների ներբուհական աշխատանքի համար: Ընդհանուր առմամբ այդ միջոցառումներին մասնակցել է ՄՈՒՀ-երի ավելի քան 300 աշխատակից:

<u>Բարձրագույն ուսումնական հաստատություններ</u>

2019թ. բուհերի շահակիցների հետ անցկացվել են մի շարք կլոր սեղաններ, որոնց ընթացքում քննարկվել են որակի ապահովման ներկայիս գործընթացները,

ռազամավարական պլանավորման հետ կապված խնդիրները, ՄԿԾ որակի ապահովման մեխանիզմները, գործիքները, ուսանողի գնահատման քաղաքականությունն ու ընթացակարգերը: «ՄԿԾ որակի ապահովման մեխանիզմներ», «Ուսանողի գնահատում» թեմաների շրջանակներում կարևորվել է բուհերի կողմից որակի ապահովման այնպիսի հուսալի մեխանիզմների ներդրումը, որոնցով հնարավոր է հասարակությանն ապացուցել, որ բուհերի կողմից շնորհվող որակավորումներն արժանահավատ են: Նշված թեմաների քննարկմանը մասնակցել են տարբեր բուհերից ամբիոնների վարիչներ, դասախոսներ և որակի ապահովման պատասխանատուներ:

Նմանատիպ կլոր սեղաններ են կազմակերպվել նաև Արցախի Հանրապետության 3 բուհերում:

<u>Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ</u>

Նախորդ տարիներին քոլեջների հետ աշխատանքի արդյունքում դուրս էին բերվել մի շարք խնդիրներ. ռազմավարական պլանավորման մեխանիզմի անկատարությունը, որի պատճառը նաև քոլեջների ինքնավարության և նախաձեռնողականության պակասն է, որոշումներ կայացնելիս ոչ հավաստի տվյալների վրա հիմնվելը, աշխատաշուկայում տեղի ունեցող փոփոխություններին ոչ բավարար արձագանքը, ռեսուրսային բազայի մաշվածությունը, ինչը հանգեցնում է ուսանողների շրջանում աշխատաշուկայում պահանջված գործնական հմտությունների պակասին: Այդ խնդիրները քննարկվեցին ՈԱԱԿ-ի կազմակերպած «ՄԿՈ-գործատու երկխոսություն. համատեղ ռազմավարության բանաձև» թեմայով համաժողովում, որի ընթացքում անդրադարձ եղավ նաև ինստիտուցիոնալ հավատարմագրմանն առնչվող խնդիրներին:

4 գյուղատնտեսական քոլեջներին ինստիտուցիոնալ հավատարմագրմանը նախապատրաստելու նպատակով «Որակավորումների բարելավում ավելի լավ աշխատատեղերի համար» ԵՄ բյուջետային աջակցության ֆինանսական համաձայնագրի թիվ 5 նախապայմանի շրջանակներում իրականացվեցին որակի ներքին ապահովման գործընթացների վերաբերյալ քննարկումներ, որոնց, ընդհանուր առմամբ, մասնակցել է 40 աշխատակից նշված քոլեջներից:

5. Որակի ներքին ապահովման պատասխանատուների հանդիպումներ

Հաշվետու տարում հանդիպումներ են կազմակերպվել ՀՀ բուհերի ՈԱ կենտրոնների հետ: Դրանց ընթացքում ոչ միայն քննարկվել են մասնագիտական կրթության որակի ապահովման ոլորտում առաջացած հիմնախնդիրները և մարտահրավերներն, այլև դրանք հարթակ են հանդիսացել դրական փորձի վերհանման, ՈԱ ոլորտում նորարարությամբ և ձեռքբերումներով միմյանց հետ կիսվելու համար:

2019թ. ՈԱԱԿ-ում կազմակերպվել է «Որակի ապահովման ներկայիս գործընթացները. ձեռքբերումներ և մարտահրավերներ» թեմայով 2 կլոր սեղան՝ մեկը հավատարմագրված բուհերի, մյուսը հավատարմագրում չանցած բուհերի որակի ապահովման կառույցների ղեկավարների հետ: Միջոցառմանը մասնակցել է 29 մասնագետ՝ 17 հավատարմագրված բուհերից և 12 մասնագետ հավատարմագրում չանցած բուհից: Եթե առաջինի դեպքում քննարկվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման երկրորդ շրջափուլի առանձնահատկությունները, բուհերում ՈԱ մշակույթի տարածման հիմնահարցերը, որակի ապահովման մեխանիզմների և գործիքների հետ կապված հարցեր, ապա երկրորդի դեպքում՝ հավատարմագրման գնալու խոչընդոտները, դժվարությունները: Երկու կլոր սեղանների ընթացքում քննարկումները ցույց տվեցին, որ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը հզոր ազդակ է եղել բուհերի առաջընթացի, ռազմավարական կառավարման, համակարգված որոշումների կայացման համար:

2019թ. տեղի է ունեցել բուհերի ՈԱ կառույցների ղեկավարների հետ ևս 2 պլանավորված հանդիպում: «ՄԿԾ մշտադիտարկում և աուդիտ. ՎՊՀ-ի փորձը» /ՎՊՀ ՈԱ կառույցի ղեկավար Մ.Շահվերդյան/ թեմայով կլոր սեղանը առիթ հանդիսացավ քննարկելու ՄԿԾ մշտադիտարկումը՝ որպես գնահատման ներբուհական գործընթաց, աուդիտը՝ որպես ՄԿԾ կառավարման միջոց: Կլոր սեղանը լավ ազդակ էր բուհերում ՄԿԾ-ների մշտադիտարկման մեխանիզմների ներդրման կամ բարելավման համար:

«Որակի ապահովման ներքին համակարգերի համեմատական վերլուծություն» / ԵՊԼՀ ՈԱ կառույցի ղեկավար Ռ.Խաչատրյան/ թեմայով կլոր սեղանի ընթացքում քննարկվեցին որակի ապահովման համար պատասխանատու կառույցների տեսակները, դրանց արդյունավետությունը, որակի ապահովման ռազմավարական հիմքերը, ՈԱ համակարգի գնահատման և վերանայման քաղաքականությունները:

6. Որակի ապահովման աջակիցների ցանց

Որակի ապահովման աջակիցների ցանցը շարունակում է գործել որպես փորձի փոխանակման հարթակ: Ցանցի անդամների համար շփումների հարթակ է ՈԱԱԿ-ի ֆեյսբուքյան էջում բացված «Որակի աջակիցներ» անվամբ հատուկ խումբը, որտեղ գրանցված է 295 մասնագետ ավելի քան 30 քոլեջներից և 14 բուհերից: Նախորդ տարվա համեմատությամբ գրանցվածների թիվը գրեթե կրկնապատկվել է: Խմբում դրվում են ՈԱԱԿ գործունեության հետ կապված նորությունները, շահակիցները /հատկապես քոլեջների աշխատակիցները/ փորձի փոխանակում են կատարում, կազմակերպվում են քննարկումներ: Սակայն ցանցի կայացման, որպես ոլորտի խնդիրների քննարկման հարթակի ձևավորման հետ կապված խնդիրներ կան, որոնք

հաշվետու տարում հաղթահարել չհաջողվեց: Խնդիրների մի մասը, որը կապված է ֆինանսական ռեսուրսի բացակայության հետ /ցանցի կայացման համար անհրաժեշտ է փոխայցեր կատարել, տարբեր ՄՈՒՀ-երում քննարկումներ կազմակերպել/, առաջիկա տարում կհաղթահարվի վեբինարներ իրականացնելու միջոցով: Հաջորդը ցանցի անդամների մոտիվացիայի խնդիրն է: Երբ քոլեջների ներգրավումը ՈԱ գործընթացներում նոր էր սկսել, մոտիվացիան շատ բարձր էր, և ցանցը միջին մասնագիտական ոլորտի խնդիրների շուրջ ակտիվ գործում էր: Սակայն երբ հավատարմագրման գործընթացները քոլեջների մասով ժամանակավորապես կանգ առան, պակասեց նաև մոտիվացիան:

7. «Ուսանողության ձայն» նախագիծ

ՈԱԱԿ-ի «Ուսանողության ձայն» նախագիծը 2011 թվականից սկսած իրականացնում է ուսանող-փորձագետների վերպատրաստումներ՝ ուսանողների շրջանում հետաքրքրություն առաջացրած արդիական թեմաների, խնդիրների վերաբերյալ հետազոտություններ, թեմատիկ վերլուծություններ:

Ուսանող-փորձագետների բազայում ընդգրկված է «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող-փորձագետի դասընթացին մասնակցած շուրջ 400 ուսանող: Ուսանողները մասնակցում են հավատարմագրման գործընթացներում որպես ուսանող-փորձագետ, կամ ներգրավվում են գործընթացներում որպես պասիվ դիտորդ, համակարգողի օգնական: Հավատարմագրման գործընթացներում մասնակցած ուսանող-փորձագետները ներգրավվում են նաև իրենց ուսումնական հաստատություններում որակի ներքին ապահովման գործընթացներում, մասնակցում են ինքնավերլուծության կազմմանը, ՄՈՒՀ-երում իրականացվող տարբեր հարցումների կազմակերպմանն ու արդյունքների վերլուծությանը:

2018 թվականից սկսած ուսանող-փորձագետների վերապատրաստումներին մասնակից դարձան նաև քոլեջում սովորող ուսանողները: 2019 թվականին ուսանող-փորձագետների բազան համալրվել է շուրջ 50 ուսանողով: Նրանցից 25-ը բժշկական մասնագիտության կրթական ծրագրերով սովորող ուսանողներ են:

Հաշվետու տարում «Ուսանողության ձայն» նախագծի կողմից կազմակերպվել են տարբեր բուհերի «Կրթության կառավարում» մասնագիտությամբ սովորող ուսանողների և ՈԱԱԿ աշխատակիցների հանդիպումներ: Հանդիպման ժամանակ քննարկվել են ուսանողների կողմից բարձրաձայնվող խնդիրները, կրթական համակարգի բարեփոխումները: Ապագա կրթության կառավարիչներին են ներկայացվել ՈԱԱԿ-ում իրենց հետագա կարիերայի հնարավորությունները:

Ինչպես նախորդ տարիներին, հաշվետու տարում ևս ՈԱԱԿ-ում կազմակերպվել են «Կրթության կառավարմում» մասնագիտությամբ սովորող ուսանողների հետազոտական

պրակտիկաներ: Հետազոտական պրակտիկայի արդյունքում «Կրթության կառավարմում» մասնագիտությամբ սովորող երկու ուսանող համալրել է ՈԱԱԿ աշխատակազմը:

2011-2019 թվականների ընթացքում ՈԱԱԿ-ի ուսանող փորձագետների հաջողություններն արտացոլված են հետևյալ աղյուսակում.

N.	Նկարագրություն	Ուսանողների թիվը
1.	Մասնակցել են հավատարմագրման գործընթացներին	100
2.	Դարձել են ՈԱԱԿ աշխատակից	7
3.	Դարձել են բուհերի որակի ներքին ապահովման բաժնի աշխատակից	7
4.	Դարձել են եվրոպական ուսանողական միավորման ուսանող-փորձագետների բազայի անդամ	8
5.	Մասնակցում են ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպվող տարեկան միջոցառումներին	200

Աղյուսակ 2

Ուսանողներից շատերի համար ուսանող-փորձագետի դասընթացը, հավատարագրման գործընթացներում ներգրավվածությունն ու ձեռքբերված պրակտիկ փորձը հնարավորություն են տվել դառնալու Եվրոպական ուսանողական միավորման /ESU/ կողմից համակարգվող ուսանող-փորձագետների բազայի ուսանող: Այդ բազայում ընդգրկված ուսանողները կարող են մասնակցություն ունենալ եվրոպական ուսումնական հաստատությունների հավատարմագրման գործընթացներում որպես ուսանող-փորձագետ:

8. ՈԱԱԿ-ի հաշվետվողականության ու թափանցիկության ապահովում Հասարակության հետ կապեր

Հետամուտ լինելով ՈԱԱԿ ռազմավարական ծրագրով սահմանված նպատակների և 2019թ. գործողությունների ծրագրի իրագործմանը՝ ՈԱԱԿ-ը հաշվետու տարում, ինչպես և նախկինում, շարունակել է թափանցիկ գործունեության քաղաքականությունը, որը կոչված է նպաստելու ՈԱԱԿ-ի գործունեության և մասնագիտական կրթության համակարգի նկատմամբ հասարակության վստահության ընդլայնմանն, ամրապնդմանը և հաշվետվողականությանը բոլոր շահակիցների առջև:

Պարբերաբար կազմակերպվող հանդիպումները, պլանավորվող գործողությունների և մշակվող փաստաթղթերի լայն քննարկումները ոլորտի շահակիցների հետ, գործող

չափանիշների, ձևաչափերի, ընթացակարգերի և այլ փաստաթղթերի հասանելիության ապահովումը, տարատեսակ խորհրդատվությունների, վերլուծությունների և հաշվետվությունների հրապարակումը կոչված են այդ նպատակին:

ՈԱԱԿ-ի կայքում և սոցիալական ցանցերի էջերում տարվա ընթացքում լուսաբանվել են կառույցի գործունեության բոլոր ոլորտները. համաժողովները, շահակիցների հետ աշխատաժողովները, բուհերում և քոլեջներում իրականացվող արտաքին գնահատման գործընթացները, Հավատարմագրման հանձնաժողովի որոշումները ՄՈՒՀ-երի հավատարմագրման վերաբերյալ, հավատարմագրված և ինստիտուցիոնալ հավատարմագրում չունեցող բուհերում ՈԱԱԿ-ի կողմից մշտադիտարկման գործընթացը, ՈԱԱԿ-ում փորձագետների և ուսանող-փորձագետների վերապատրաստումները, ՈԱԱԿ-ի գործունեությունը միջազգային ասպարեզում և այլն:

Այս նպատակով տարվա ընթացքում ՈԱԱԿ կայքում կատարվել է 61 տեղեկատվական բնույթի հրապարակում և 18 իրազեկում սպասվող միջոցառման մասին: Նույն նպատակով ՈԱԱԿ-ի ֆեյսբուքյան էջում տարվա ընթացքում կատարվել է 300-ից ավելի գրառում:

Տարվա ընթացքում կայքում են տեղադրվել նաև հավատարմագրված բուհերի կարողությունների մասին փորձագիտական զեկույցները, ՈԱԱԿ եզրակացությունները, Հավատարմագրման հանձնաժողովի որոշումները: Պարբերաբար թարմացվել է Հավատարմագրման պետական գրանցամատյանը՝ իրազեկելով շահակիցներին հավատարմագրումների, վերահավատարմագրումների և դրանց ժամկետների մասին:

ՈԱԱԿ-ի փորձագիտական զեկույցների անգլերեն տարբերակները հրապարակվել են նաև Արտաքին գնահատման զեկույցների եվրոպական շտեմարանում /DEQAR/, որը հասանելի է միջազգային հանրությանը:

ՈԱԱԿ-ի 10-ամյակի միջոցառումներ

Հաշվետու տարում շահակիցների հետ շփումները նախորդ տարիների համեմատությամբ շատ ավելի ակտիվ են եղել: Եթե նախկինում ՈԱԱԿ-ը տարվա մեջ մեկ շաբաթ հայտարարում էր որակի շաբաթ և ողջ շաբաթվա ընթացքում տեղի էին ունենում համաժողովներ, աշխատաժողովներ և ընդլայնված կազմով քննարկումներ շահակիցների հետ, ապա այս անգամ այդպիսին է եղել ողջ տարին:

2019թ. ՈԱԱԿ-ը նշում էր իր գործունեության տասնամյակը: Այդ առիթով ողջ տարին հայտարարվեց որակի տարի և նշանավորվեց շահակիցների հետ ակտիվ շփումներով՝ թե ԶԼՄ-ների միջոցով, թե համաժողովների և կլոր սեղան-քննարկումների միջոցով:

Տարվա ընթացքում տեղի են ունեցել հետևյալ հանրային միջոցառումները, որոնք նաև լայնորեն լուսաբանվել են ԶԼՄ-ների կողմից.

- **«Թեյախմություն» ՈԱԱԿ-ԿԳՄՄՆ-ինստիտուցիոնալ հավատարմագրում ունեցող պետական բուհեր ձևաչափով**։ Սա միջոցառման աննախադեպ ձևաչափ էր, որի նպատակն էր անմիջական հաղորդակցություն հաստատել բուհերի կառավարման խորհուրդների հետ, խրախուսել կառավարման արդյունավետության բարձրացման և բուհերում որակի կենտրոնների դերի մեծացմանն ուղղված գործողությունները։ Բուհերի հոգաբարձուների խորհրդի նախագահները բարձր գնահատեցին շփման նման ձևաչափը՝ առաջարկելով պարբերաբար նման հանդիպումներ կազմակերպել։ Արդյունքում պայմանավորվածություն ձեռք բերվեց մեծացնել բուհերում որակի ներքին ապահովման կառույցների դերը, իսկ որակի ապահվման կառույցները հաշվետու կլինեն բուհերի Կառավարման խորհուրդներին։
- **«ՄԿՈՒ-գործատու համագործակցություն. համատեղ ռազմավարության բանաձև»** խորագրով համաժողով միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների մասնակցությամբ։ Նպատակն էր հերթական անգամ խրախուսել գործատուների հետ երկխոսությունը, գործատուների հետ համագործակցության հաջողված փորձով կիսվելու հնարավորություն ընձեռել միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին։ Գործատուների և քոլեջների ներկայացուցիչների համատեղ քննարկման արդյունքում պարզվեց, որ տեղական աշխատաշուկայի կարիքները և հնարավորությունները բավարար վերլուծության չեն ենթարկվում։ Պատճառներից մեկն էլ գործատու-ՄՈՒՀ միջնորդավորված երկխոսությունն է։ Ավելի վաղ ՈԱԱԿ-ը ՄՈՒՀ-երին գործատուների հետ երկխոսության մոդել էր ներկայացրել։ Մի քանի ՄՈՒՀ-երի մասնագետներ ներկայացրեցին մոդելի կիրառման և գործատուների հետ արդյունավետ երկխոսության իրենց փորձը։ Առաջարկ եղավ դիմել ԿԳՄՄՆ՝ գործատուների հետ համագործակցությամբ վերանայելու ոլորտի չափորոշիչները և ուսումնական պլանները։ Շահակիցները համամիտ էին նաև, որ թե գործատուների, և թե ուսանողների շահերից է բխում կարճաժամկետ ուսումնական ծրագրեր ունենալը։
- **«Որակավորումների արժանահավատ շնորհում»** թեմայով դասախոսների և ուսանողների համաժողով։ Միջոցառման նպատակն էր շեշտադրել դասախոսի դերը կրթական գործընթացում։ Քննարկման առանցքային թեմաներն են եղել շնորհվող որակավորումների արժանահավատությունը, ուսուցանող գնահատումը և ուսանողի առաջընթացի պլանավորումը։ Համաժողովի մասնակիցները քննարկեցին, թե որոնք են դասախոսի և ուսանողի մոտիվացիայի անկման պատճառները և ինչպես է հնարավոր մոտիվացնել երկու կողմերին էլ։ Ըստ այդմ՝ դասախոսի մոտիվացիայի միջոց է հետազոտությունը։ Իր աշխատանքը հետազոտող, վերլուծող և

շարունակաբար բարելավող դասախոսը, բնականաբար, կուտակում է լավագույն փորձ: Այն մասնագիտական շրջանակներում տարածելը կբարձրացնի դասախոսի հեղինակությունը՝ մոտիվացնելով նրան շարունակել իր գործունեությունը, իսկ կրթական գործընթացն էլ կբարելավվի՝ շնորհիվ գիտական մոտեցմամբ հիմնավորված լավագույն փորձի ներդրման: Իսկ ուսանողին մոտիվացնելու ուղիներից մեկն ուսուցանող գնահատումն է: Դրա համար կարևոր է, որ դասախոսը պլանավորի ուսանողի առաջընթացը: Համաժողովի մասնակիցներին ներկայացվեց ուսանողի առաջընթացի պլանավորման բանաձև:

- **«Որակավորումների արժանահավատ շնորհում և հավատարմագրում»** թեմայով համաժողով Արցախում: Նպատակն էր կրթության որակի մշակույթ ձևավորել Արցախի շահակիցների շրջանում: Համաժողովի շրջանակներում քննարկվել են Արցախում ընթացող բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումները, որակի ապահովման մարտահրավերները: ՈԱԱԿ մասնագետները նաև գործնական աշխատաժողովներ են կազմակերպել Արցախի բուհերի աշխատակիցների համար՝ ներկայացնելով, թե ինչպես արդյունավետ ինքնավերլուծություն իրականացնել, ինչպես վերապատրաստել և ձևավորել փորձագետների և ուսանող-փորձագետների բազաներ:
- **Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի 10-րդ ընդհանուր վեհաժողովը Երևանում**: Միջոցառումը 2015-ին Հայաստանում տեղի ունեցած Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի նախարարական գագաթնաժողովի տրամաբանական շարունակությունն էր. Երևանի կոմյունիկեով շեշտադրվեց ուսանողակենտրոն, ուսուցանող կրթությունը, իսկ 2019-ին նույն քննարկումը շարունակվեց որակի ապահովման տեսանկյունից:

ԶԼՄ-ների հետ աշխատանք և ազդեցության գնահատում

Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ-ի մասնագետները հրավիրվել են 13 հեռուստառադիոհաղորդումների և հարցազրույցների՝ ներկայացնելով ՈԱԱԿ-ի գործունեությունը, ձեռքբերումները Հայաստանում և Հայաստանից դուրս, ոլորտում առկա հիմնախնդիրները և դրանց ուղղությամբ ձեռնարկվող քայլերը:

Մասնավորապես, 2019-ի ընթացքում ՈԱԱԿ մասնագետները հյուրընկալվել են Հանրային, «Երկիր մեդիա», «Արմենիա», «Շանթ» հեռուստաընկերություններին, ինչպես նաև Հանրային ռադիոյին, «Լրատվական ռադիո» և «Իմ ռադիո» ռադիոընկերություններին:

Վերը նշվածից բացի ՈԱԱԿ-ի միջոցառումների լուսաբանման, ինչպես նաև տարածած մամուլի հաղորդագրությունների արտատպման շնորհիվ տարվա ընթացքում ԶԼՄ-ներում

ՈԱԱԿ-ի մասին 200-ից ավելի հրապարակում է եղել:

Չնայած վերը ներկայացված տվյալներին, այնուամենայնիվ, ԶԼՄ-ների հետ աշխատանքի առումով շարունակում է մարտահրավեր մնալ մասնագիտացած լրատվամիջոցների բացակայությունը: Կրթական թեմաները ԶԼՄ-ներում քիչ են լուսաբանվում, իսկ լուսաբանվելու պարագայում մեծամասամբ դա արվում է քաղաքական զարգացումների համատեքստում: Շատ քիչ լրատվամիջոցներ ունեն կրթական թեմաներով մասնագիտացած լրագրողներ: Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ-ը հարցախույզ է անցկացրել լրագրողների շրջանում՝ պարզելու, թե արդյոք կցանկանան կրթության որակի ապահովման, այդ գործընթացի լուսաբանման առանձնահատկությունների վերաբերյալ դասընթացի մասնակցել: Դասընթացին մասնակցության ցանկություն հայտնել են մի քանի տասնյակ լրագրողներ, սակայն խնդիր է դասընթացի օրվա և ժամի որոշումը. 6-օրյա աշխատանքային գրաֆիկով աշխատող լրագրողներն իրենց աշխատանքային ժամերին դասընթացի մասնակցել չեն կարող:

Շարունակելով շահակիցներին հասանելիության ցուցանիշների ներկայացումը՝ նշենք, որ «Google analytics» ծառայության կողմից հասանելի տվյալների համաձայն ՈԱԱԿ կայքը հաշվետու տարում ունեցել է 15 747 այցելու և 63 319 էջադիտում՝ նախորդ տարվանից շուրջ 6 հազարով ավելի: Պահանջված էջերն են «Հավատարմագրում» և «Ինստիտուցիոնալ հավատարմագրման պետական գրանցամատյան» բաժինները թե հայերեն, թե անգլերեն տարբերակներում, ինչը վկայում է հավատարմագրման և դրա արդյունքների նկատմամբ շահակիցների հետաքրքրվածության մասին: Նշենք, որ 2019-ի ընթացքում Հավատարմագրման պետական գրանցամատյանի հայերեն տարբերակն ուսումնասիրել է 2600 օգտատեր, անգլերեն տարբերակը՝ 1300, չհաշված առանձին բուհերի հավատարմագրման տվյալների ուսումնասիրությունները:

Պահանջարկ ունեցող էջերից են նաև «Նորություններ» և «Փորձագետներ» բաժինները: Այցելուների մեծ մասի տարիքը տատանվում է 18-34-ի միջև:

ՈԱԱԿ գործունեությունն առավել լայն զանգվածների հասանելի դարձնելու նպատակով հավաքագրվել են կայքում և սոցիալական ցանցերում մեր շահակիցների հետաքրքրությունները ներկայացնող վիճակագրական տվյալները և վերլուծվել են: Հետագա գործողությունները հիմնված են լինելու այդ տվյալների և հաղորդակցության ոլորտի ժամանակակից միտումների վրա:

Նշենք, որ հաշվետու տարում ևս քայլեր են ձեռնարկվել ՈԱԱԿ կայքն արդի պահանջներին համապատասխանեցնելու և օգտագործողի հարմարավետությունն ապահովելու նպատակով: Արդյունքում բարեփոխվել և ավելի գործածական են դարձել կայքի «Հավատարմագրման պետական գրանցամատյան» և «Ընթացիկ հավատարմագրումներ» բաժինները:

ՈԱԱԿ-ի հետևորդների թիվն ավելացել է ոչ միայն պաշտոնական կայքում, այլ նաև սոցիալական ցանցերում: Facebook սոցիալական ցանցում տարվա ընթացքում ՈԱԱԿ-ի հետևորդների թիվն ավելացել է 531-ով՝ հասնելով 3542-ի 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Տարվա ընթացքում գործել է նաև ՈԱԱԿ-ի Youtube-յան ալիքը, որտեղ հրապարակվել են կրթության որակին առնչվող հեռուստաանդրադարձները: Կանոնավոր կերպով գործել են ՈԱԱԿ-ի էջերը Twitter սոցիալական ցանցում, Flikcr նկարների պահոց-հարթակում, «Google bussiness» հարթակում:

Կարևոր ձեռքբերում է նաև այն, որ շահակիցները սկսել են ոլորտին բնորոշ տերմինաբանությամբ միմյանց հետ շփվել, այդ թվում և ներբուհական միջավայրում: Ամփոփելով բուհերի կայքերի ուսումնասիրությունները՝ կարող ենք նշել, որ ռեկտորատի նիստերում պարբերաբար անդրադարձ է կատարվում որակի մշակույթի ամրապնդմանը, բուհի բարելավման ծրագրի իրագործմանը և դրա շրջանակներում տեղի ունեցող փոփոխություններին, գործատուների հետ երկխոսությանը կամ այդ երկխոսության զարգացմանը, կրթական ծրագրերի բարելավմանը: Ռեկտորի թեկնածուները բուհի զարգացման իրենց ծրագրում անդրադարձ են կատարում հավատարմագրմանը, ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշներով առաջնորդվելուն և այլն:

II. ՈԱԱԿ-Ի ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Փաստեր

- Իրականացվել է 2019 թվականին կատարված հավատարմագրման գործընթացների արդյունավետության գնահատում 6 բուհերի շրջանում:
- Իրականացվել է հավատարմագրման գործընթացների արդյունավետության գնահատում այդ գործընթացներին մասնակցած 30 ազգային և միջազգային փորձագետների շրջանում:
- Հավատարմագրման գործընթացների արդյունավետության և առանձին փորձագետների աշխատանքի արդյունավետության գնահատում են կատարել գործընթացի համակարգողները:
- ՈԱԱԿ-ի անձնակազմը գնահատել է ՈԱԱԿ-ի ներքին գործընթացների, կառավարման և ռեսուրսների արդյունավետությունը:
- ՈԱԱԿ-ի անձնակազմի անդամները մասնակցել են վերապատրաստումների և կարողությունների զարգացման միջոցառումների եվրոպական մի շարք երկրներում:
- Պատրաստվել և Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիոցիային (ENQA) է ներկայացվել ՈԱԱԿ-ի առաջընթացի հաշվետվությունը:
- Տեղի է ունեցել Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի մշտադիտարկման այց ՈԱԱԿ:

Ազդեցություն

- Կատարված հարցումների և շահակիցների հետ հանդիպումների արդյունքում բարելավվել են ՈԱԱԿ-ի փորձագետների վերապատրաստման փաթեթը, նախնական գնահատման ձևաչափը, թերությունների վերացման պլանի ձևաչափը և այլ կանոնակարգող փաստաթղթեր:
- ՈԱԱԿ-ի առաջարկությունները ներառվել են «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծում:
- Ներդրվել է էլեկտրոնային ինստիտուցիոնալ տվյալների շտեմարանը:
- ENQA-ի փորձագետները ՈԱԱԿ-ի առաջընթացը գնահատել են դրական:

1. Արտաքին և ներքին գործընթացների արդյունավետության գնահատում

Որակի ներքին ապահովման քաղաքականության արդյունավետ իրականացման նպատակով ՈԱԱԿ-ն իր որակի ապահովման գործընթացները համակարգում է 11 տիրույթով /առաջնորդություն, մարդկային ռեսուրսների կառավարում, հավատարմագրման հանձնաժողով, ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրում, որակի ներքին ապահովում, միջազգային կապեր, հաղորդակցություն և հանրային կապեր, իրավական գործընթացներ, քարտուղարություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ, ռեսուրսների կառավարում/: Որակի ներքին ապահովման գործընթացները կառավարելու համար մշակված են պրոտոկոլներ, որոնք ներկայացնում են յուրաքանչյուր տիրույթի նպատակները, գործողությունների ծրագրերը, գնահատման ցուցիչները և որակի ապահովման գործիքները: Յուրաքանչյուր տիրույթի որակի ապահովման համար իրականացվում են անձնակազմի ամենօրյա հանդիպումներ, որտեղ քննարկվում են ՈԱԱԿ-ի գործունեության ընթացիկ հարցերը և խնդիրները, հանդիպումներ ներքին և արտաքին շահակիցների հետ /ՈԱԱԿ-ի կառավարման խորհուրդ, հավատարմագրման հանձնաժողով, փորձագետներ, ուսանողներ, բուհերի կառավարման օղակների ներկայացուցիչներ, վարչական կազմի ներկայացուցիչներ, ամբիոնների վարիչներ, դասախոսներ/: Իրականացվում են հարցումներ և ֆոկուս խմբային քննարկումներ գնահատելու հավատարմագրման գործընթացների արդյունավետությունը ՄՈՒՀ-երի, փորձագետների և համակարգողների շրջանում: Իրականացվում են ներքին գնահատումներ ՈԱԱԿ-ի աշխատակիցների շրջանում՝ գնահատելու ՈԱԱԿ-ի տարբեր գործընթացների արդյունավետությունը և առկա խնդիրներն ու լուծման ուղիները: Պարբերաբար հավաքագրվում են տվյալներ և առաջընթացի ցուցանիշներ՝ համաձայն Եվրոպական չափորոշիչների և ուղենիշների:

Իրականացվում են նաև ուսումնասիրություններ և վերլուծություններ՝ վերհանելու մասնագիտական կրթության ոլորտում որակի ապահովման հիմնախնդիրները և լավագույն փորձը, ինչպես նաև հավատարմագրման գործընթացների ազդեցությունը բարձրագույն ուսումնական հաստատությունների վրա:

Կատարված ուսումնասիրությունների և հանդիպումների արդյունքում ՈԱԱԿ-ը պարբերաբար իրականացնում է փաստաթղթային հենքի բարելավումներ:

Հավատարմագրման գործընթացների վերլուծություն

2019թ. տեղի ունեցած ինստիտուցիոնալ հավատարմագրման 6 գործընթացների որակը գնահատելու, մասնակից շահակիցների արձագանքը հավաքագրելու նպատակով ՈԱԱԿ-ն իրականացրել է հավատարմագրման գործընթաց անցած բուհերի կարծիքի վերլուծություն:

Ուսումնասիրությունն իրականացվում է անանուն հարցման միջոցով ՄՈՒՀ-երի, փորձագետների, համակարգողների շրջանում, որին հաջորդում են խմբային քննարկումները: Գործընթացների արդյունավետության գնահատումն իրականացվում է ըստ փուլերի.

1. ինքնավերլուծություն,
2. նախնական գնահատման գործընթաց,
3. փորձագիտական այց,
4. փորձագիտական զեկույցի պատրաստում:

Վերլուծության ժամանակ անդրադարձ է կատարվել նաև ՈԱԱԿ-ի կողմից փորձագետներին տրամադրվող փաստաթղթերի փաթեթին /օրենսդրական, նորմատիվ փաստաթղթեր, ուղենիշներ, ձևաչափեր և այլն/: Բոլոր փորձագետները համարում են, որ տրամադրված փաստաթղթեր բավարար են արդյունավետ փորձաքննություն իրականացնելու համար:

Գնահատվում է նաև փաստաթղթերի նախնական ուսումնասիրման գործընթացի արդյունավետությունը, որը դիտարկվել է ըստ հետևյալ խնդիրների՝

- ընդհանուր պատկերացում կազմել ՄՈՒՀ-ի վերաբերյալ (85%),
- դուրս բերել հիմնախնդիրներ/հարցեր փորձագիտական այցի ընթացքում պարզաբանելու նպատակով (90%),
- պատրաստել փորձագիտական զեկույց (85%):

Ստացված տվյալները թույլ են տալիս եզրակացնել, որ նախնական գնահատման գործընթացն արդյունավետ է կազմակերպվում: Փորձաքննության այս փուլը ծառայում է իր նպատակին, փորձագետները կարողանում են հաստատության վերաբերյալ ընդհանուր պատերացում կազմել, գնահատել ուժեղ և թույլ կողմերը: Սակայն, եղել են կարծիքներ բուհի

կողմից կատարված ինքնավերլուծության ոչ վերլուծական լինելու մասին, ինչը դժվարեցնում է նախնական գնահատման փուլը: Այս խնդրի լուծման համար ՈԱԱԿ-ը փոփոխել է ինքնավերլուծության ընդունման ձևաչափը և մոտեցումները: Մինչ ինքնավերլուծության ընդունումը, ՈԱԱԿ-ը ինքնավերլուծությունը տրամադրում է ՈԱԱԿ-ի գործընթացներին մասնակցած անկախ փորձագետի՝ բովանդակային կարծիք ստանալու նպատակով:

Փորձագետները գնահատել են նաև, թե ուսումնական հաստատություն կատարվող այցի ժամանակ որքանով են փորձագետների առջև դրված նպատակներն իրականացվել: Ուսումնասիրվել է իրականացված այցերի արդյունավետությունը (100%), հանդիպումների իրականացման ձևաչափի հարմարավետությունն ու օգտակարությունը տեղեկատվություն ստանալու տեսանյունից (91%), հաստատության կողմից լրացուցիչ տեղեկատվություն տրամադրելու պատրաստակամությունը (80%): Անդրադարձ է կատավել նաև հանդիպումների օպտիմալ տևողությանը (45-60 րոպե): Փորձագետները գնահատել են նաև փորձագիտական զեկույցի ձևաչափը և դրա օգտակարությունը: Վերլուծությունը ցույց է տալիս, որ փորձագետների 85%-ը բավարարված է փորձագիտական խմբի զեկուցի ձևաչափով: Փորձագետների կարծիքով, սակայն, ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող վերապատրաստումների ժամանակ պետք է շեշտադրում կատարել փորձագիտական զեկույցի տրամաբանությանը: Այս նպատակով ՈԱԱԿ-ը բարելավել է փորձագիտական վերապատրաստումների բովանդակությունը՝ վերապատրաստումներում ներառելով դերային խաղեր և մասնավոր դեպքի ուսումնասիրություն:

Հարցումներին և ֆոկուս խմբային քննարկումներին զուգահեռ, իրականացվում են փորձագիտական զեկույցների ուսումնասիրություններ՝ դուրս բերելու տարբեր տիրույթներում առկա համակարգային խնդիրները և լավագույն փորձը:

Մարդկային ռեսուրսների կառավարում

Նախորդ տարիների համամատ՝ 2019թ.-ին ՈԱԱԿ-ում հաստիքների ավելացում կամ կրճատում չի արվել: Ինչպես նախորդ տարիներին, ըստ հաստիքացուցակի, ՈԱԱԿ-ն ունի 22 հաստիք: Սակայն նշված հաստիքների քանակը բավականին քիչ է՝ ՈԱԱԿ-ի կանոնադրական նպատակներով նախատեսված գործառույթներն իրականացնելու համար: Այդ նպատակով 2019թ. ՈԱԱԿ-ը պատրաստել է առաջարկություններ հաստիքների և աշխատավարձերի բարձրացման ուղղությամբ:

Մարդկային ռեսուրսների կառավարման համատեքստում ՈԱԱԿ-ը շատ է կարևորում ոչ միայն աշխատողների մասնագիտական վերապատրաստումը և մասնագիտական աճը, այլև ֆինանսական բավարարումը, որն բարձր մոտիվացիա ապահովելու կարևորագույն գործոն է:

Ստորև ներկայացվում է ՌԱԱԿ հաստիքացուցակն՝ ըստ պաշտոնների:

ՌԱԱԿ անձնակազմ	Հաստիքներ
1. Տնօրեն	1
2. Գլխավոր մասնագետ/բաժնի ղեկավար	3
3. Ավագ մասնագետ	4
4. Մասնագետ	5
5. Վարչական և օժանդակ կազմ	9
Ընդամենը	22

Աղյուսակ 3

2019թ. ՌԱԱԿ աշխատակազմը համալրվել է 2 նոր աշխատակցով, իսկ տարեվերջին 2 աշխատակից ազատվել է աշխատանքից՝ մեկը զինվորական ծառայության անցնելու կապակցությամբ, մյուսը՝ անձնական դիմումի համաձայն: Եղել են կադրային տեղափոխություններ՝ նոր պաշտոնի նշանակմամբ և կարգի բարձրացմամբ: Այնուամենայնիվ, բաձր որակավորում ունեցող կադրերի ներգրավումը ՌԱԱԿ աշխատակազմ դեռևս մնում է հիմնախնդիր՝ պայմանավորված ցածր աշխատավարձերով: Հիմնախնդրի կարգավորման համար ՌԱԱԿ-ը 2019թ. սկսած պլանավորել է 2020թ. և հետագա տարիներին ձեռնարկել նոր ֆինանսական աղբյուրների հայթայթման աշխատանքներ:

Կադրային քաղաքականության մեջ ՌԱԱԿ-ը կարևորվում է հավատարմագրման գործընթացների պատշաճ կազմակերպման համար անհրաժեշտ քանակի համակարգողներ ունենալը: Ինչպես նախորդ տարիների, այնպես էլ 2019թ. ընթացքում ՌԱԱԿ-ի ուշադրության կենտրոնում եղել է կադրերի շարունակական վերապատրաստումների և մասնագիտական որակավորումների բարձրացումը: ՌԱԱԿ-ի աշխատակազմը հաշվետու տարում վերապատրաստումներ է անցել Ղազախստանում, Իտալիայում, Բելգիայում, Կիպրոսում, Իսպանիայում:

Պայմանավորված ինստիտուցիոնալ հավատարմագրման երկրորդ շրջափուլով՝ ՌԱԱԿ-ը անհրաժեշտություն է համարել աշխատակիցներին մասնագիտական ոլորտներով ուղղորդելը (բժշկական, մանկավարժական, ինժեներական, տնտեսագիտական և այլն)՝ նպատակ ունենալով մշակել որակի ապահովման ոլորտային չափանիշներ՝ ուղենիշ ընդունելով միջազգային լավագույն փորձը:

Մարդակային ռեսուրսների արդյունավետ կառավարման և կարիքների բացահայտման տեսանկյունից ՌԱԱԿ-ը յուրաքանչյուր տարի, այդ թվում՝ 2019թ. իրականացրել է հարցումներ՝ պարզելու աշխատանքային միջավայրից և մարդկային

ռեսուրսների կառավարումից աշխատակիցների բավարարվածությունը:

Ստորև ներկայացվում են հարցման արդյունքները.

N		2019
1	Աշխատակազմի անդամների անձնական ձեռքբերում	100%
2	Աշխատանքային ծանրաբեռնվածությունը ողջամիտ սահմաններում է	88.89%
3	Ես բավականաչափ գնահատվում եմ իմ ղեկավարի կողմից	88.45%
4	Ընդհանուր բավարարվածությունը ստացած վերապատրաստումից	100%
5	Ես վստահում եմ տնօրենին	100%
6	Ես ունեմ գիտելիք և փորձ իմ պարտականությունները կատարելու համար	100%
7	Ես ունեմ անհրաժեշտ ռեսուրսները իմ աշխատանքն իրականացնելու համար	86.11%
8	Այն մարդիկ, ում հետ աշխատում եմ, համագործակցում են աշխատանքը կատարելու համար	90%
9	Ընդհանուր բավարարվածությունն աշխատանքից	100%

Աղյուսակ 4

Վերջին 3 տարվա վերլուծությունը ցույց է տվել, որ ՈԱԱԿ-ի աշխատակիցների բավարարվածությունը ընդհանուր կառավարումից և մասնագիտական զարգացմանն ուղղված միջոցառումներից աճել է:

ՈԱԱԿ-ը քայլեր է ձեռնարկում աշխատակիցների մասնագիտական զարգացումը խթանելու ուղղությամբ: ՈԱԱԿ-ի աշխատակազմի անդամները պարբերաբար հաղորդակցվում են ոլորտի հայտնի փորձագետների և մասնագետների հետ, մասնակցում են ազգային և միջազգային վերապատրաստումների: ՈԱԱԿ-ում կազմակերպվում են ներքին քննարկումներ, որի ժամանակ դիտարկվում են ոլորտի զարգացման միտումները և դրանց կիրառմանն ուղղված միջոցառումները: ՈԱԱԿ-ի աշխատակազմի բարձր որակավորումների մասին են վկայում միջազգային և տեղացի փորձագետների կողմից տրված կարծիքները:

ՈԱԱԿ-ի աշխատակազմը համալրվում է «Ուսանողության Ձայն» նախագծում ներգրավված և ակտիվություն ցուցաբերած ուսանողներով, «Կրթության կառավարում» մասնագիտությամբ շրջանավարտներով, որոնք նախ մասնակցում են հավատարմագրման գործընթացների որպես դիտորդներ, համակարգողի օգնականներ՝ արդյունքում անցնելով փորձաշրջան:

ՈԱԱԿ-ն ապահովված է ժամանակակից սարքավորումներով և համապատասխան ռեսուրսներով իր գործընթացներն արդյունավետ իրականացնելու համար: Հաշվետու տարում նախադրյալներ են ստեղծվել մարզերի ՄՈՒՀ-երի և ուսանողների համար հեռավար

վերապատրաստումների իրականացման նպատակով:

2019 թվականից սկսած ՈԱԱԿ-ի անձնակազմն ամբողջությամբ կիրառում է Office 365 ծրագիրը, որը նպաստել է ներքին փաստաթղթաշրջանառության գործընթացի լավացմանը և ներքին հաղորդակցության ապահովմանը:

ՈԱԱԿ ֆինանսական քաղաքականությունը և անկախություն

ՈԱԱԿ-ն իր ֆինանսական կայունությունն ու անկախությունն ապահովելու նպատակով մշակել է ֆինանսների դիվերսիֆիկացման քաղաքականություն, որը վերանայվելու է 2020թ.՝ առավել հստակ սահմանելով այն ուղղությունները և գերակայությունները, որտեղից սպասվելու են հնարավոր ֆինանսական հոսքերը, ինչպես նաև դրանց ռիսկերի կառավարման քաղաքականությունը:

ՈԱԱԿ ֆինասնական քաղաքականությունը և Կանոնադրությունը սահմանում են այն ուղղությունները, որտեղից գալիս են ֆինանսական հոսքեր.

1. պետական հիմնարկի պահպանման ծախսեր՝ որպես բյուջետային հիմնարկ,
2. հավատարմագրումներից եկող ֆինանսական հոսքեր,
3. ուսումնական հաստատությունների համար կազմակերպվող վերապատրաստումներից եկող ֆինանսական հոսքեր,
4. ՈԱԱԿ համաժողովներ՝ վճարովի հիմունքներով:

Վերոնշյալները այն հիմնական ֆինանսական հոսքերն են, որ 2019թ.-ի ընթացքում մուտք են արվել ՈԱԱԿ-ի բյուջե:

Չնայած այն հանգամանքին, որ պետությունից ՈԱԱԿ-ին հատկացվող գումարները 2019թ.-ին չեն փոփոխվել նախորդ տարիների համեմատ՝ կազմելով ընդամենը 64 մլն ՀՀ դրամ, այնուամենայնիվ մյուս երկու ուղղություններով եկող ֆինանսական հոսքերն ավելացել են, որը պայմանավորված է մի քանի գործոնով.

1. Հավատարմագրման կարգով նախատեսված՝ մինչ 2018թ.-ի դեկտեմբերի 30-ը ինստիտուցիոնալ հավատարմագրման համար դիմելու վերջնաժամկետը, ինչով պայմանավորված ՈԱԱԿ-ն ստացել է ավելի քան 17 ինստիտուցիոնալ հավատարմագրման դիմում,
2. ՈԱԱԿ-ի և ընդհանրապես որակի ապահովման և հավատարմագրման գործընթացների նկատմամբ կրթական համակարգի վստահությունը մեծացում,
3. ՈԱԱԿ-ի վերապատրաստումների կարևորությունը բուհերի որակի ապահովման գործընթացների բարելավման գործում,
4. ինստիտուցիոնալ հավատարմագրման դիմում 5 միջին մասնագիտական ուսումնական հաստատությունից:

2019թ.-ին մշակվել է ՈԱԱԿ-ի գործառությունների արդյունքային, օպտիմալ և որակյալ կազմակերպելու և իրականացնելու համար ծրագրային կառավարման և ֆինանսավորման մեխանիզմ: Այն ավարտին կհասցվի 2020թ.-ի ընթացքում: Ֆինանսավորման այս մեխանիզմը ենթադրում է ՈԱԱԿ ծրագրային ուղղություններով ֆինանսների հատկացում՝ ըստ հստակ վերջնարդյունքների:

Ստորև ներկայացված են ՈԱԱԿ ֆինանսական հոսքերը՝ վերևում նշված ուղղություններով.

ՈԱԱԿ-Ի ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄՈՒՏՔԵՐԻ ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑԻԱՆ ՎԵՐՋԻՆ ՏԱՍԸ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ԵԿԱՄՏԻ ԱՂԲՅՈՒՐ	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019
	Մասնաբաժին (%)										
Պետական ֆինանսավորում	97.80	95.9	93.5	88.5	84.7	68.1	48.5	56.6	52.2	59.8	41.2
Հավատարմագրումներ	2.20	0.7	1	6.5	5.4	1.4	35.5	15.2	19.5	27.8	43.1
Վերապատրաստումներ	-	3.4	3.8	0	0	2.1	0.6	2.5	1.95	1.6	8.5
Միջազգային համագործակցություն	-	0	1.7	2.4	9.7	28.4	15.4	25.7	24.4	6.8	6.2
Այլ եկամուտներ	-	0	0	2.6	0.2	0	0	0	1.95	4	1.0

Աղյուսակ 5



2. ՈԱԱԿ-ի գործունեության արտաքին գնահատման գործընթացներ

ՈԱԱԿ-ը Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) լիիրավ անդամ է սկսած 2017 թվականից: ՈԱԱԿ-ը, ENQA-ի կողմից հավատարմագրում ստանալուց երկու տարի անց, ըստ նախատեսված ժամանակացույցի, ներկայացրել է միջանկյալ առաջընթացի զեկույց: Դրանում ներկայացվել է փորձագիտական խմբի՝ բարելավմանը միտված խորհրդատվությունների հիման վրա ՈԱԱԿ-ի առաջընթացի վերլուծությունը՝ համաձայն Եվրոպական չափորոշիչների և ուղենիշների (ESG):

Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ցանցի փորձագետներ Նուրիա Քոմեթ Սենալը (Իսպանիա) և Բերնարդ Կոուլին (Բելգիա), որոնք 2016թ. ՈԱԱԿ-ում արտաքին գնահատում են իրականացրել, հաշվետու տարում այցելել են ՈԱԱԿ՝ առաջընթացի մշտադիտարկման նպատակով: Այցից առաջ համաձայնեցվել են փորձագիտական այցի ընթացքում քննարկվող թեմաները, որոնք մարտահրավեր են ՈԱԱԿ-ի համար: Այսպես, ՈԱԱԿ-ի կողմից առաջարկվել են հետևյալ թեմաները.

- ծրագրային հավատարմագրման արդյունավետ իրականացման ուղիներ,
- ոլորտային միջազգային չափանիշների առավել արդյունավետ կիրառում,
- բուհերում որակի ներքին ապահովման արդյունավետության բարձրացման ուղիներ:

Այցի ընթացքում փորձագետներին ներկայացվել է ENQA-ի հավատարմագրումից հետո կատարված քայլերն ու առաջընթացը, մասնավորապես քննարկվել են ՈԱԱԿ-ի

անկախության բարձրացմանը, ծրագրային հավատարմագրման ակտիվացմանը, ինչպես նաև թեմատիկ վերլուծությունների շատացմանն ուղղված քայլերը: Ներկայացվել են նաև Հայաստանում մասնագիտական կրթության որակի ապահովման համակարգի մարտահրավերները և զարգացման ռազմավարությունը, նոր շեշտադրումները և մոտեցումները հավատարմագրման գործընթացում, փորձագետների ներգրավման և վերապատրաստման քաղաքականությունը, Հիմնադրամի միջազգային համագործակցությունները և այլն:

Փորձագետների կողմից ներկայացվել է խորհրդատվություն առկա խնդիրների հաղթահարման համար:

Զեկուցի և այցի արդյունքում Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ցանցի (ENQA) Կառավարման խորհրդի նիստում արձանագրվել է, որ ENQA-ին անդամակցությունից ի վեր ՈԱԱԿ-ում տեղի է ունեցել զգալի առաջընթաց՝ համաձայն ՈԱԱԿ-ի բարելավման պլանի:

3. Բարելավմանը միտված գործողությունների պլանավորում և իրականացում

Արտաքին և ներքին գործընթացների պարբերական գնահատման, հավատարմագրման գործընթացների արդյունավետության վերլուծության, ինչպես նաև Հավատարմագրման հանձնաժողովի, տեղացի և միջազգային փորձագետների արձագանքների հիման վրա վերանայվել ու լրամշակվել են ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող գործընթացները կանոնակարգող մի շարք փաստաթղթեր:

Հաշվետու տարում բարելավվել են.

- փորձագետների վերապատրաստումների փաթեթը,
- ՄՈՒՀ-երի համար իրականացվող վերապատրաստումների փաթեթը,
- ՄՈՒՀ-երի ինստիտուցիոնալ կարողությունների նախնական գնահատման ձևաչափը,
- ինքնավերլուծության ընդունման ցուցիչները,
- Հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգը:

Հաշվետու տարում ՈԱԱԿ-ը շարունակել է համագործակցությունը ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ՝ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագծում առաջարկություններ ներկայացնելու նպատակով:

III. ՈԱԱԿ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

Փաստեր

- ՈԱԱԿ-ը հյուրընկալել է ENQA-ի 10-րդ վեհաժողովը, որին մասնակցել են շուրջ 150 որակի ապահովման միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:
- ՈԱԱԿ-ն ընդգրկվել է ENQA-ի խորհրդում՝ դառնալով ENQA-ի կառավարման մարմնում ընդգրկված հետխորհրդային տարածքի առաջին և միակ կառույցը:
- ՈԱԱԿ-ն անդամակցում է Բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների միջազգային ցանցին (INQAAHE), ԱՄՆ Բարձրագույն կրթության հավատարմագրման խորհրդի Որակի միջազգային խմբին (CIQG), Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների ցանցին (CEENQA):
- ՈԱԱԿ-ն ընդգրկվել է Բոլոնյան գործընթացի որակի ապահովման գործընկերային աջակցության խմբում (Bologna Peer Support Group on QA):
- ՈԱԱԿ-ի մասնագետները որպես համակարգողներ մասնակցել են արտաքին գնահատման և հավատարմագրման գործընթացների Ղազախստանում և Մոնղոլիայում:
- ՈԱԱԿ-ն ընդգրկվել է «EuniQ» ծրագրում որպես կայացած և փորձառություն ունեցող եվրոպական կառույց:
- ՈԱԱԿ-ն արտաքին գնահատում է իրականացնելու շվեդական Բարձրագույն կրթության հավատարմագրման կառույցի հետ (UKÄ):
- ՈԱԱԿ-ն անձնակազմի փոխանակման և շարժունության ծրագրեր կիրականացնի ֆրանսիական, բելգիական, շվեյցարական, անգլիական, մոլդովական որակի ապահովման գործակալությունների հետ:
- Փորձագետների փոխանակում է տեղի է ունեցել ՈԱԱԿ-ի և Ղազախստանի Կրթության և առողջապահության ոլորտում հավատարմագրման և որակի ապահովման եվրասիական կենտրոնի (ECAQA) միջև:

Ազդեցություն

- ՈԱԱԿ-ի՝ ENQA-ի խորհրդում ներգրավվածությամբ հետխորհրդային երկրների առանձնահատկությունները հասանելի են դառնում Եվրոպական ցանցում:
- Տևական ժամանակ է ՈԱԱԿ-ը գրանցված է EQAR-ում և իր ակտիվ ներդրումն ունի Արտաքին գնահատման զեկույցների ռեգիստրում (DEQAR), որի միջոցով ճանաչելի են դառնում ՈԱԱԿ-ի իրականացրած հավատարմագրումների արդյունքները:
- Մեծացել է ՈԱԱԿ-ի նկատմամբ վստահությունը տարածաշրջանում:
- Միջազգային հանրությունը ՈԱԱԿ-ը ճանաչում է որպես նոր մոտեցումներով կառույց, որն արդյունավետորեն տեղայնացնում է եվրոպական որակի ապահովման ուղենիշները:

1.Միջազգային ճանաչում ապահովող կառույցներին անդամակցություն

ՈԱԱԿ-ը 2017թ. դարձել է Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) լիիրավ անդամ և գրանցվել Որակի ապահովման եվրոպական գրանցամատյանում (EQAR):

ՈԱԱԿ-ն ակտիվորեն մասնակցում է ENQA-ի և EQAR-ի կողմից կազմակերպված միջացառումներին՝ ներկայացնելով որակի ապահովման ոլորտում առկա մարտահրավերն ու հաջողված փորձը:

Հաշվետու տարում ՈԱԱԿ-ը մասնակցել է Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ցանցի (ENQA) անդամների 9-րդ համաժողովին, որի ընթացքում քննարկվել են որակի ապահովման գործակալությունների առաջնահերթությունները Բոլոնյան գործընթացում:

2019 թվականին ՈԱԱԿ-ը հյուրընկալել է Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) 10-րդ ընդհանուր վեհաժողովը, որի ընթացքում առաջին անգամ կառույցի գործունեությանն առնչվող հարցերից բացի, տեղի են ունեցել նաև բովանդակային քննարկումներ: Վեհաժողովի ընթացքում քննարկվել են հետխորհրդային երկրների խնդիրները կրթության որակի ապահովման ոլորտում, տարածաշրջանային համագործակցության հնարավորությունները, ինչպես նաև համատեղ հավատարմագրումները՝ որպես տարածաշրջանի երկրների նկատմամբ վստահություն ձևավորելու միջոց: Քննարկումներ են եղել նաև բարձրագույն կրթության որակի ապահովման ապագայի խնդիրների, ինչպես նաև Եվրոպական որակի ապահովման չափորոշիչների և ուղենիշների հնարավոր փոփոխությունների վերաբերյալ, որոնք անհրաժեշտ կլինեն առաջիկայում սպասվող մարտահրավերներին դիմակայելու համար:

Համաժողովի ժամանակ ՈԱԱԿ-ի կողմից ներկայացվել է «Ուսանողության ձայն» նախագծի կողմից իրականացվող ուսանող-փորձագետների պատրաստման և ուսանողների հետ աշխատանքի փորձը: Այն ներառվել է ENQA-ի անդամ պետությունների կողմից իրականացվող գործընթացների լավագույն փորձի ուղեցույցում:

Երևանում վեհաժողովի անցկացումը հնարավորություն տվեց եվրոպական կրթական հանրության ուշադրությունն ուղղել դեպի Հայաստան: Ավելի քան հարյուր հիսուն երկրներից ժամանած որակի ապահովման գործակալությունների ներկայացուցիչները ծանոթացան ՀՀ մշակույթին ու կրթական համակարգին:

Վեհաժողովի ընթացքում տեղի ունեցավ նաև Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) խորհրդի անդամների ընտրություն: Խորհրդի անդամ ընտրվեց ՈԱԱԿ-ի ներկայացուցիչը: Հայաստանը հետխորհրդային

տարածքի առաջին և միակ երկիրն է, որը ներկայացված է ENQA խորհրդում: ENQA-ի խորհրդում ՈԱԱԿ-ի ընդգրկվածությամբ հնարավոր կլինի լսելի դարձնել հետխորհրդային երկրների ձայնը եվրոպական ցանցում, իսկ այդ տարածքների հավատարմագրման կառույցներն էլ վստահ կլինեն, որ իրենց վերաբերյալ որոշում կայացնելիս հաշվի է առնված իրենց համատեքստը:

2011թ. ՈԱԱԿ-ն անդամակցում է Բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների միջազգային ցանցին (INQAAHE) և ներկայացված է կառավարման խորհրդում, 2016թ. ՈԱԱԿ-ը ԱՄՆ Բարձրագույն կրթության հավատարմագրման խորհրդի Որակի միջազգային խմբի (CIQG) անդամ է, 2017թ. նաև Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների ցանցի (CEENQA) անդամ: ՈԱԱԿ-ն ակտիվ մասնակցություն է ցուցաբերել ցանցերի կողմից կազմակերպվող միջոցառումներին և հանդես է եկել տարբեր զեկուցումներում և քննարկումներում:

Բոլոնյան գործընթացի որակի ապահովման գործընկերային աջակցության խումբ

2018թ. սեպտեմբերին Բոլոնիայի անդամ երկրները նախաձեռնել են ոլորտային խմբերի ստեղծում, որոնք նպատակ ունեն նպաստելու անդամ երկրների լավագույն փորձի տարածմանը ողջ եվրոպական կրթական տարածքում: Հաշվետու տարում ՈԱԱԿ-ն ընդգրկվել է Բոլոնյան գործընթացի որակի ապահովման գործընկերային աջակցության խմբում (Bologna Peer Support Group on QA):

Մշակվել և խմբի անդամ պետությունների ներկայացուցիչներին է ներկայացվել որակի ապահովման տիրույթի ծրագիր, որտեղ ներառված են որակի ապահովման ոլորտում երկրի առաջընթացն ու լավ փորձը, մարտահրավերներն ու առաջիկայում սպասվող գործողությունները:

Հաշվետու տարում ՈԱԱԿ-ը մասնակցել է որակի ապահովման տիրույթում շահակիցների երկրորդ հանդիպմանը, որի ընթացքում մասնակից երկրները ներկայացրել են որակի ապահովման տիրույթի իրենց գործողությունների ծրագիրը և առկա միտումները հետևյալ ենթաոլորտներում.

- Օրենսդրության և Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում որակի ապահովման չափանիշների և ուղենիշների (ESG) համապատասխանեցում,
- եվրոպական դիրքորոշումը համատեղ հավատարմագրումների վերաբերյալ,
- շահակիցների ներգրավվածություն,
- որակի ներքին ապահովում,
- որակի արտաքին ապահովում. ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրում:

Տեղի են ունեցել քննարկումներ։ Արդյունքում՝ ՈԱԱԿ-ը, համագործակցելով անդամ պետությունների որակի ապահովման գործակալությունների հետ, դիմել է անձնակազմի փոխանակման ծրագրերի՝ զարգացնելու իր կարողությունները ծրագրային հավատարմագրման և համատեղ հավատարմագրումների տիրույթում:

1. Միջազգային ծրագրեր

ԵՄ «Էրազմուս+»-ի C3QA ծրագիր

Հաշվետու տարում ԵՄ «Էրազմուս+»-ի C3QA («Եվրոպական ինտեգրմանը համահունչ բարձրագույն կրթության 3-րդ աստիճանի որակի ապահովման համակարգի ներդրում՝ խթանելու հետազոտությունների միջազգայնացումը») ծրագրի շրջանակներում իրականացվել է ասպիրանտական երեք կրթական ծրագրի արտաքին գնահատում (ՀՖՀ-ում՝ «Իրավունք», ԵՊՀ-ում՝ «Կենսաբանություն», ՀԳՊԱ-ում՝ «Դիզայն և դեկորատիվ կիրառական արվեստ» մասնագիտությունների կրթական ծրագրերը)։ Արտաքին գնահատման գործընթացները կազմակերպվել և համակարգվել են ՈԱԱԿ-ի կողմից։ Փորձագիտական խմբում ընդգրկած էին տեղացի ու միջազգային մասնագետներ C3QA ծրագրի գործընկեր հաստատություններից։ Արտաքին գնահատումների արդյունքում փորձարկվեցին ծրագրի շրջանակներում ՈԱԱԿ-ի մշակված ասպիրանտական կրթության որակի ապահովման չափանիշները, ինչպես նաև խորհրդատվությունների փաթեթ ներկայացվեց ծրագրերի բարելավման ուղղությամբ։

2019թ. C3QA ծրագրի շրջանակներում ՈԱԱԿ մասնագետները մասնակցել են Ղազախստանում գործող երկու բուհի (Մ. Այեզովի անվան Հարավային Ղազախստանի պետական համալսարան և Մ. Նարիկբաևի անվան KAZGUU համալսարան) ասպիրանտական կրթական ծրագրերի հավատարմագրմանը։ ՈԱԱԿ մասնագետները ծանոթացել են հավատարմագրման կարգի և գործընթացի առանձնահատկություններին Ղազախստանում՝ որպես դիտորդներ մասնակցելով փորձագիտական խմբերի աշխատանքներին։ Այնուհետ ՈԱԱԿ մասնագետները ներկայացրել են ձեռք բերված փորձն իրենց գործընկերների շրջանում՝ զուգահեռներ անցկացնելով հավատարմագրման և որակի ապահովման գործընթացների միջև Հայաստանում և Ղազախստանում, ինչպես նաև ուրվագծել Ղազախստանի հետ հնարավոր համագործակցության հեռանկարները։

Հաշվետու տարում C3QA ծրագրի շրջանակներում ՈԱԱԿ տնօրենը որպես փորձագետ մասնակցել է մոնղոլական Օտգոնթենգեր համալսարանում (Otgontenger University) և Մոնղոլիայի ազգային համալսարանում իրականացվող ծրագրային հավատարմագրմանը, որի ավարտին փորձագետները յուրաքանչյուր կրթական ծրագրի համար պատրաստել են փորձագիտական զեկույց՝ բարելավմանը միտված

խորհրդատվություններ մատուցելով մոնողոլական բուհերին:

2019թ. C3QA ծրագրի շրջանակներում ՈԱԱԿ-ի կողմից իրականացվել է ասպիրանտական կրթության որակի ապահովման չափանիշների և չափորոշիչների կիրառելիության վերաբերյալ հետազոտություն գործընկեր հաստատությունների շրջանում, որի արդյունքները ներկայացվել են ԿԳՄՄՆ-ում տեղի ունեցած շահակիցների հանդիպման ժամանակ: ՈԱԱԿ-ի կողմից մշակված ասպիրանտական կրթության որակի ապահովման չափանիշներն ու չափորոշիչները շահակիցների կողմից գնահատվել են մեծամասամբ կիրառելի, բարելավմանը տանող և շահակիցների կարիքներին համապատասխան:

Հաշվետու տարում C3QA ծրագրի շրջանակներում նաև իրականացվել են բազմաթիվ հանդիպումներ և քննարկումներ շահակիցների հետ: C3QA ծրագրի ազդեցությունը կրթական համակարգի վրա, իրականացված միջոցառումների արդյունքները և ձեռքբերումները ՈԱԱԿ-ը ներկայացրել է ծրագրի ամփոփիչ համաժողովի ընթացքում:

C3QA ծրագրի արդյունքների հիման վրա համապատասխան փոփոխությունների առաջարկ է ներկայացվել ԿԳՄՄՆ՝ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծում ընդգրկելու համար:

ԵՄ ֆինանսավորմամբ «EuniQ» ծրագիր

2019 թվականին ՈԱԱԿ-ը որպես գործընկեր ընդգրկվել է EUniQ (Եվրոպական մոտեցման մշակում եվրոպական համալսարանների ցանցի համապարփակ որակի ապահովման համար) ծրագրում: «EuniQ» ծրագրի համակարգողը Նիդեռլանդների և Ֆլանդրիայի հավատարմագրման գործակալությունն (NVAO) է:

ՈԱԱԿ-ն ընգրկվել է ծրագրում որպես կառույց, որը հաջողությամբ կիրառել է Եվրոպական մոտեցումները երկրում որակի ապահովման համակարգի մշակման և ներդրման համար:

«EUniQ» ծրագրի նպատակն է ճանապարհային քարտեզ ապահովել որակի ապահովման գործակալությունների համար, որպեսզի նրանք, հաշվի առնելով եվրոպական համալսարանների ցանցերի առանձնահատկությունները, տրանսազգային կրթությունը և համատեղ հավատարմագրումները, միասին որակի ապահովման համակարգի գնահատման այնպիսի մեթոդաբանություն մշակեն, որը կիրառելի կլինի բոլոր երկրների համար:

Ծրագրի շրջանակներում մշակված մեթոդաբանությունը կփորձարկվի 3-4 արտաքին գնահատումների միջոցով, որոնք կիրականացնեն գործընկեր հավատարմագրման գործակալությունները:

Ծրագրի գործընկերների թվում են Բարձրագույն կրթության որակի ապահովման

եվրոպական ցանցը (ENQA), Շվեյցարիայի հավատարմագրման և որակի ապահովման գործակալությունը (AAQ), Բարձրագույն կրթության և հետազոտության գնահատման բարձրագույն խորհուրդը (Hceres, Ֆրանսիա), շվեդական Բարձրագույն կրթության հավատարմագրման կառույցը (UKÄ), Եվրոպական համալսարանների ասոցիացիան (EUA, Բելգիա), Եվրոպական ուսանողական միությունը (ESU), Ալբանիայի կրթության և սպորտի նախարությունը, Բուլղարիայի կրթության և գիտության նախարությունը, Վրաստանի կրթության և գիտության նախարությունը, Ռումինիայի կրթության նախարարությունը, Սլովենիայի որակի ապահովման գործակալությունը (NAKVIS), Լատվիայի Կրթական տեղեկատվական կենտրոնը (AIC), Սերբիայի հավատարմագրման գործակալությունը (NEAQA), Իտալիայի համալսարանների և հետազոտական կենտրոնների գնահատման ազգային գործակալությունը (ANVUR):

Հաշվետու տարում ՈԱԱԿ-ը մասնակցել է ծրագրի մեկնարկային հանդիպումներին, ներգրավված է եղել եվրոպական համալսարանների գնահատման համար մեթոդաբանության մշակման աշխատանքային խմբում:

Որպես ձևավորված և փորձառություն ունեցող եվրոպական կառույց՝ ՈԱԱԿ-ն առաջիկա տարում արտաքին գնատում իրականացնելու իր փորձով կկիսվի շվեդական Բարձրագույն կրթության հավատարմագրման կառույցի հետ (UKÄ)՝ համատեղ համակարգելով արտաքին գնահատման գործընթաց Նորարարության, տեխնոլոգիաների և ինժեներիայի ոլորտի եվրոպական համալսարանների ցանցում, որում ընդգրկված են համալսարաններ Ֆինլանդիայից, Ֆրանսիայից, Շվեդիայից, Իտալիայից, Գերմանիայից, Պորտուգալիայից և Իսպանիայից: Արտաքին գնահատման ժամանակ կփորձակվի ծրագրի շրջանակներում մշակված մեթոդաբանությունը:

Անձնակազմի փոխանակման ծրագրեր

Բոլոնյան գործընթացի որակի ապահովման գործընկերային աջակցության խմբում ներգրավված որակի ապահովման գործակալությունների հետ քննարկումների արդյունքում խմբի անդամ երկրները ներկայացրել են փորձի փոխանակման ծրագրերի նախագծեր: Հաշվետու տարում ՈԱԱԿ-ը ներկայացրել է հինգ ծրագիր և բոլոր ծրագրերը հավանության են արժանացել գնահատող խմբի կողմից:

Արդյունքում ՈԱԱԿ մասնագետները կմասնակցեն փորձի փոխանակման նպատակով իրականացվող շարժունության 4 ծրագրի: Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրումների համատեղման որակի ապահովման հաջողված փորձն ուսումնասիրելու նպատակով ՈԱԱԿ մասնագետները կայցելեն Նիդեռլանդների և Ֆլանդրիայի հավատարմագրման կազմակերպություն (NVAO), Ֆրանսիայի Ինժեներական

մասնագիտությունների խորհուրդ (CTI) և Հետազոտության և բարձրագույն կրթության գնահատման բարձրագույն խորհուրդ (HCERES), Հավատարմագրման և որակի ապահովման շվեյցարական գործակալություն (AAQ) և Շոտլանդիայի Որակի ապահովման գործակալություն (QAA Scotland):

Իսկ ՈԱԱԿ-ի՝ Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում որակի ապահովման եվրոպական չափանիշներին (ESG) համապատասխան որակի ապահովման համակարգի ստեղծման և ինստիտուցիոնալ հավատարմագրումների փորձին ծանոթանալու համար Հայաստան կժամանեն Մոլդովայի Կրթության և հետազոտության որակի ապահովման ազգային գործակալության մասնագետները:

Հաշվետվու տարում հավատարմագրման ՈԱԱԿ-ի գործընթացներին ծանոթանալու նպատակով Լեհաստանի Հավատարմագրման հանձնաժողովից դիտորդներ են ժամանել՝ բարձր գնահատելով ՈԱԱԿ-ի փորձը:

2. Տարածաշրջանային համագործակցություն

Հաշվետու տարում ՈԱԱԿ-ը փոխըմբռնման հուշագիր է կնքել Կրթության և առողջապահության ոլորտում հավատարմագրման և որակի ապահովման եվրասիական կենտրոնի հետ (ECAQA, Ղազախստանի Հանրապետություն), որը կոչված է ապահովելու երկու գործակալությունների համագործակցությունը բժշկական կրթության որակի ապահովման ոլորտում:

Հուշագրի շրջանակներում փորձագետների փոխանակում է տեղի ունեցել. ՈԱԱԿ-ի երկու փորձագետ ԵՊԲՀ-ից մասնակցել են ECAQA-ի կողմից համակարգվող Ղազախական բժշկական բուհերի հավատարմագրման գործընթացին, իսկ ECAQA-ի փորձագետը մասնակցել է ԵՊԲՀ-ի ինստիտուցիոնալ վերահավատարմագրման գործընթացին: Փորձագետների փոխանակումը հնարավորություն տվեց ծանոթանալու Բժշկական կրթության համաշխարհային ֆեդերացիայի (WFME) միջազգային չափանիշների կիրառմանը: Այս փոխանակման արդյունքում հնարավորություն է ընձեռնվել բժշկական ոլորտի հավատարմագրումներում ներառել բժշկական ոլորտային միջազգային չափանիշները:

Առաջիկայում նախատեսվում են համատեղ հավատարմագրումներ և վերապատրաստումներ:

Հաշվետու տարում ՈԱԱԿ-ը շարունակել է տարածաշրջանի երկրների հետ համագործակցությունը, մասնավորապես հիմքեր են ստեղծվել Ռուսաստանի հետ համատեղ հավատարմագրումների իրականացման, փորձագետների փոխանակումների ուղղությամբ:

2019 թվականին ՈԱԱԿ-ի ներկայացուցիչն ընդգրկվել է ԱՊՀ երկրների կրթության

որակի ապահովման խորհրդի կազմում որպես ՀՀ ներկայացուցիչ: Խորհրդում ընդգրկվածությունն էլ ավելի կմեծացնի տարածաշրջանում որակի արտաքին ապահովման և հավատարմագրումների ոլորտում համագործակցությունը:

IV. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

2019 թվականին շահակիցների հետ կատարված քննարկումների, տասնամյակին նվիրված միջոցառումների և տարբեր կլոր սեղան-հանդիպումների արդյունքում քննարկվել են այն մարտահրավերները, որոնք առաջիկա տարում կշարունակեն լինել ՈԱԱԿ-ի գործունեության առանցքում: Կարևոր մարտահրավերներն են.

- Մասնագիտական կրթական համակարգում որակի շարունակական բարելավման մեխանիզմների ներդրումը;
- Որակավորումների արժանահավատ շնորհման հավաստումը;
- Փորձագիտական կարողությունների ձևավորումը բոլոր ոլորտներում;
- ՄՈՒՀ-երի և ոլորտի գործատուների համատեղ պատասխանատվությունը որակյալ աշխատուժի ձևավորման համար;
- Որակի ապահովման համակարգի դերի բարձրացումը մասնագիտական ուսումնական հաստատությունների կառավարման մեջ;
- Մասնագիտական կրթության վերաբերյալ տվյալների հավաքագրումը և վերլուծական հենքի կարևորումը;
- Որակի ապահովման գործընթացների հանրային ընկալման բարձրացումը;
- Կրթական ծրագրերի որակի ապահովման ներկայացվածությունը եվրոպական ռեգիստրում;
- Կրթության կառավարման մասնագետների համայնքի համալրումը: